

ԵՐԱԿՐՈՆԵԱ ԿԱՅԱԿՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 նոյեմբերի

«Սինոփսիս» ընկերության նախագահ Չի-Ֆուն Չանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սինոփսիս» ընկերության նախագահ Չի-Ֆուն Չանին՝ ուղեկցությամբ «Սինոփսիս Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Յուլիա Մուսայելյանի:

Կերության նախագահ Չի-Ֆուն Չանն է: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց Չի-Ֆուն Չանին՝ ՀՀ պետական մրացանակին արժանանալու առիթով եւ մաղթեց նրան նորանոր ձեռքբերումներ ու



Հանդիպմանը, անդրադառնալով Ուկրաինայի թեմի ձեւավորման պատմությանը եւ գործունեության առաջին տարիներին, Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց տիար Շատվորյանին եւ միության բոլոր անդամներին՝ ձեռքբերումների եւ հայրենիքին ու եկեղեցուն մատուցած նվիրյալ ծառայության համար: Պարոն Վիլեն Շատվորյանն իր երախտագի-

տությունն արտահայտեց հայոց Հայրապետին՝ Մայր Աթոռում ջերմ ընդունելության, հայրական օրհնության եւ զորակցության համար՝ հաստատելով, որ եկեղեցին մշտապես իր ժողովրդի կողքին է: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայորդիներին բարեմաղթեց Աստծու օրհնությամբ բարոր եւ խաղաղ կյանք:

ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Էվանգելոս Տուրնակիսին: Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունը

Հանդիպմանը Նորին Սրբությունը անդրադարձավ նաեւ երկու ժողովուրդների պատմական առնչակցություններին՝ խոսելով Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում կրած ծանր եւ ողբերգական կորուստների մասին:



բարեմաղթեց արդյունավոր առաքելություն: Հայոց Հայրապետը, անդրադառնալով Մայր Աթոռի եւ դեսպանության միջեւ առկա սերտ փոխգործակցությանը, ընդգծեց, որ այն խարսխված է դարավոր բարեկամության վրա:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս դեսպանի, իր շնորհակալությունը հայտնեց Հունաստանի Հանրապետությանը՝ Հայաստանին պատերազմի ծանր օրերին ցուցաբերած զորակցության եւ աջակցության համար:

Իր հերթին Հունաստանի դեսպանը Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ առավելագույն ջանքեր կներդնի բարեկամ երկրների փոխհարաբերությունների խորացման, հայհունական գործակցության առավել զորացման ուղղությամբ: Անդրադառնալով տարածաշրջանային զարգացումներին՝ դեսպան Էվանգելոս Տուրնակիսին իր մտահոգություններն արտահայտեց աղբյուրաբանական ազդեցիկ առնչությամբ:

16 նոյեմբերի

Ուկրաինայի հայերի միության նախագահին եւ անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի հայերի միության նախագահ Վիլեն Շատվորյանին եւ միության անդամներին՝ ուղեկցությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Մարկոս Եպս Դովհաննիսյանի:

Մարկոս սրբազանը, ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ընդգծեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են ժամանել՝ իրենց ուխտը նորոգելու եւ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու համար: Սրբազան հայրը ներկայացրեց նաեւ համայնքի քսանամյա գործունեությունն ու առկա մարտահրավերները՝ փաստելով, որ Ուկրաինայի բոլոր համայնքներում հայությանն առաջնորդող ուժը միասնականությունն է:

Առաջնորդ սրբազանը Նորին Սրբությանը

տեղեկացրեց, որ Հայաստան կատարած այցելության շրջանակներում մասնակցել են Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հարեւանությամբ գտնվող զբոսայգու բացման արարողությանը, որի բարեկարգման պատասխանատվությունն ստանձնել էր Ուկրաինայի հայերի միությունը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով եւ իր հայրական օրհնությունը փոխանցելով ներկաներին՝ միության քսանամյակի կապակցությամբ, ուրախությամբ արձանագրեց, որ Ուկրաինայի հայ համայնքն ամրորեն կապված է հայրենիքին եւ պատրաստակամորեն է արձագանքում Հայաստանում առկա մարտահրավերների հաղթահարմանը:

Հայսարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խոր անհանգստությամբ է հետեւում Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանին Ադրբեջանի կողմից սանձազերծված մարտական գործողություններին, որոնք սպառնում են վերաճելու լայնամասշտաբ պատերազմի: Ադրբեջանը, անտեսելով 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության պայմանները, նոր հավակնություններ է դրսևորում այս անգամ Հայաս-

տան պետության ինքնիշխան տարածքների նկատմամբ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կոչ է անում միջազգային հանրությանը, միջեկեղեցական ու միջկրոնական կառույցներին եւ քույր եկեղեցիների առաջնորդներին՝ հասու բոլոր միջոցներով ծայր բարձրացնելու եւ կասեցնելու ադրբեջանական կողմի հերթական ոտնձգությունները՝ հանուն մարդկային կյանքերի փրկության եւ հիմնարար իրավունք-

ների պաշտպանության, հանուն նոր ողբերգության կանխման:

Հայոց եկեղեցին հորդորում է աշխարհասփյուռ իր զավակներին՝ զորավազ լինել հայրենիքին եւ կարելին ի գործ դնել՝ իրենց պետությունների եւ միջազգային կազմակերպությունների ուշադրությանը հանձնելու հիշյալ դատապարտելի գործողությունները, որոնք վերստին ապակայունացնում են իրավիճակը տարածաշրջան-

ում եւ խաթարում թանկ գնով հաստատված փխրուն խաղաղությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ հոգևոր դասը աղոթում են հայոց պետականության անսասանության, ազգի միասնականության ու ամուր կամքի եւ հայրենյաց պաշտպանների արիասիրտ ոգու համար՝ հաղթահարելու այս մարտահրավերները եւ վերականգնելու խաղաղ, ապահով եւ արժանապատիվ կյանքը մեր ժողովրդի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ընդհանուրագիրը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի ծննդյան 75-ամյակի առիթով

Նոյեմբերի 20-ին Ն. Ս. Ս. Ս. Պատրիարք Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ հղեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ ծննդյան 75-ամյակի առիթով:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալին ուղղված շնորհավորագրում ասված է.



«Ձերդ Սրբություն, Ձեր ողջ կյանքը, Ձեր հովվապետական ծառայությունն ամբողջապես նվիրել եք աշխարհում Քրիստոսի եկեղեցու դերի ամրապնդմանը, Սուրբ Ավետարանի անանց ճշմարտությունների բարեհաջող վկայությանը եւ մարդկանց սրտերում հոգեւոր ու բարոյական արժեքների անդադար արձատվորմանը՝ արդի մարտահրավերների հաղթահարման եւ մարդկության խաղաղ ու բարօր կյանքի կերտման գործում հոգեւորի առաքելության եւ կարեւորության ամուր գիտակցությամբ: Ձեր հովվական խոսքն ու խրատը մեր օրերում իբրեւ փարոս է ծառայում կարոտյալների, տկարների եւ մխիթարություն ու հոգեւոր լուսավորություն փնտրող շատերի համար:

Այս նշանակալից օրը գոհունակությամբ ցանկանում ենք հատկապես ընդգծել Ձեր անձնական ներդրումը՝ մեր Եկեղեցիների միջեւ սերտ կապերի եւ գործակցության զարգացման հարցում, ինչն իր հերթին կարեւոր ուղերձ է հավատակից մեր ժողովուրդների եղբայրական հարաբերությունների համար ողջ աշխարհում: Բարձրորեն գնահատում ենք Ձեր ջերմ վերաբերմունքը Հայոց եկեղեցու եւ հայ ժողովրդի նկատմամբ, որի դրսևորումն են մաւէ Ձեր հոգատարությունը եւ անխոնջ ջանքերը դարաբաշխ հակամարտության խաղաղ կարգավորման, հայոց հոգեւոր ժառանգության պահպանման եւ Դադիվանքի անխաթար գործունեության ապահովման համար»:

Նորին Սրբությունը Կիրիլ Պատրիարքին մաղթել է արեւշատ կյանքի երկար տարիներ եւ Աստծու զորակցությունը հովվապետական ծառայության մեջ՝ հանուն Ռուսաստանի եւ Ռուս Եկեղեցու պայծառության:

Ավարսվեց Գերագույն հոգեւոր խորհրդի Ժողովը

Նոյեմբերի 8–13-ը, նախագահությամբ Ն. Ս. Ս. Ս. Պատրիարք Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի Ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ժողովի նիստերը վարեցին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ խաժակ արք. Պարսամյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս խաչատրյանը:

Ժողովին հրավիրված էր մասնակցելու Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերժ Սեդրակյանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձավ արցախյան պատերազմի հետեւանքներին եւ դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Այս առումով Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը ներկայացրեց Արցախում տիրող իրավիճակը եւ առկա մարտահրավերները՝ ի մասնավորի կարեւորելով հոգեւոր, հոգեբանական եւ հումանիտար աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացումը: Առաջնորդ արքազանը կարեւորեց նաեւ Հայաստանից դեպի Արցախ պարբերաբար ուխտագնացությունների կազմակերպումը: Վրթանես արքազանն անդրադարձավ Արցախի թեմում սպասավորող քահանաների սոցիալական եւ հովվական ծառայությանը՝ ընդգծելով այդ առաքելության կարեւորությունն ի նպաստ Արցախի մեր ժողովրդի հոգեւոր կյանքի զորացման:

Ժողովին քննության առնվեցին նաեւ Մայր տաճարի հիմնամորոգության եւ ամրակայման աշխատանքները, որոնց վերաբերյալ տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը: Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները ծանոթացան նաեւ տաճարի

Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-խալամ Ալլահշուքլու Փաշա Ջադեի հետ հոկտեմբերի 13-ին Մոսկվայում տեղի ունեցած եռակողմ հանդիպմանն անդրադարձավ Նաթան արք. Հովհաննիսյանը՝ ընդգծելով, որ հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպումները կարեւոր ձեւաչափ են արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման եւ հետպատերազմյան շրջանում առաջացած մարտահրավերները հաղթահարելու գործում: Սրբազան հայրն անդրադարձ կատարեց եռակողմ հանդիպման ընթացքում Վեահափառ Հայարապետի կողմից բարձրացված խնդիրներին եւ կարեւորեց Նորին Սրբության ներդրած ջանքերը՝ ուղղված ռազմագիծների վերադաձին, Արցախի անվտանգությանը, մշակութային կառույցների ու սրբավայրերի պահպանությանը:

Ժողովի օրակարգում ընդգրկված էր նաեւ հետպատերազմյան եւ համաճարակային պայմաններում Եկեղեցու առաքելության իրագործմանն ուղղված ծրագրերը: Թեմայի շուրջ զեկույցներ ներկայացրեցին Արեւելյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ խաժակ արք. Պարսամյանը, Տավուշի թեմի առաջնորդ Դանիել եպս Ֆրնտըզյանը: Ժողովականները, քննության առնելով հետպատերազմյան եւ համաճարակային իրավիճակում առկա մարտահրավերները, մասնավորաբար կարեւորեցին սոցիալական ու կրթական ծրագրերի զորացումը եւ մատաղ սերնդի հոգեւոր դաստիարակությունը: Թելադրվեց, որ այս ուղղությամբ իրականացվող ծրագրերն էլ ավելի ընդգրկուն պետք է դարձնել եւ թեմերի ու եկեղեցական համայնքների կողմից հատուկ ուշադրության արժանացնել:

Քննարկվեցին նաեւ Եկեղեցու կանոնական ու հովվական կյան-



նորոգության ժամանակ ի հայտ եկած խնդիրներին: Տեղեկացվեց, որ, նկատի ունենալով վերականգնման եւ բարեկարգման աշխատանքների ընդհանուր ծավալը եւ առաջացած մոր խնդիրները, Մայր տաճարի հիմնամորոգության աշխատանքները հնարավոր կլինի ավարտին հասցնել 2022 թվականին:

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մոսկվայի եւ

քին, կարգապահական ու իրավական հարցերին, կրթական ու սոցիալական ծրագրերին եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող հարցեր:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՆԱԽԻԶԵԻԱՆԻ ԵՒ ԲԵՍՐԱԲԻՒՅՈՒ ԹԵՐԻ՝ 1830–1918 ԹԹ. ՀՈՂԵՒՈՐ- ԼՈՒՍԿԱՐԳԱԿԱՆ ԴՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 21


1892 թ. նույն եկեղեցու առջեւ է թաղվել նաեւ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս Ռաֆայել Պատկանյանը (Գամառ Քաթիպա): 1902 թ., հանգանակված միջոցներով, նրանց գերեզմանների վրա դրվել են քանդակագործ Անդրեաս Մարությանի պատրաստած կիսանդրիները:

Դպրոցի եւ տպարանի շնորհիվ Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքը հիմնադրման օրից մինչեւ XX դ. սկիզբը եղել է հայ մշակույթի եւ կրթության կարեւոր կենտրոններից:

Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքը եւ նրա դպրոցը դադարել են գործելուց Ռուսաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց (1917 թ.) հետո:

1972 թ., Հայաստանի վարպետների ձեռքով Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքի եկեղեցին մոտորավել է եւ վերածվել «Ռուս-հայկական բարեկամության թանգարանի»: Հ. Ալամդարյանի գերեզմանի վրա խաչքար է կանգնեցվել:

Ինչպես վերը նշեցինք, Նովոռուսիայի եւ Գրիմի հայերը եւս գտնվում էին Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի հոգեւոր ենթակայության ներքո:



Իզմայիլ (հայկական աղբյուրներում՝ Իսմայիլ) քաղաքում միջին դարերում բնակություն են հաստատել Ամասիայից, Եվդոկիայից եւ Արեւմտյան Հայաստանի զանազան բնակավայրերից գաղթած հայեր: Ունեցել են եկեղեցի (1669 թվականից): 1787–1791 թթ. ռուս-թուրքական պա-

տերազմի ժամանակ հայերը մեծ օգնություն են ցույց տվել ռուսական զորքերին: XIX դ. սկզբին Իզմայիլում կար ընդամենը 60 տուն հայ: 1828 թ. խաչատուր Լազարյանի դրամական օգնությամբ մոտավոր է Իզմայիլի հայոց եկեղեցին, եւ բացվել հայկական տարրական դպրոց: Սակայն հետգիտես նվազել է հայերի թիվը, եւ արդեն 1905 թ. Իզմայիլում կար ընդամենը 25–30 տուն հայ բնակիչ:

Լքսեց գյուղում (Ուկրաինա, Իվանո-Ֆրանկովսկի մարզ) XVII–XIX դդ. եղել է հայկական գաղութ: Առաջին տեղեկությունները հայերի մասին 1669 թվականից են: 1782 թ. Լքսեցում ապրել է 268, 1808 թ.՝ 800, 1860 թ.՝ 60, 1877 թ.՝ 20 հայ ընտանիք: Հայկական Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին 2 անգամ (1779 թ. եւ 1830 թ.) այրվելուց հետո վերակառուցվել եւ պահպանվել է գայսօր: Եկեղեցուն կից գործել է 4 հոգեւոր եղբայրություն:

Խարկովում հայեր հաստատվել են դեռեւս միջին դարերում: Հայերի թիվը հատկապես ավելացել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Մեծ եղեռնից հետո՝ Արեւմտյան Հայաստանից գաղթածների (հիմնականում՝ խոտորոշորցիներ) հաշվին: 1920-ական թթ. Խարկովում ապրել է ավելի քան 3 հազար հայ: Խոլոդնայա գյուղ թաղամասում ցայսօր պահպանվում է երկու հայկական եկեղեցիներից մեկը: Խարկովում եղել է հայկական դպրոց: 1930-ական թթ. քաղաքի կաթի տեխնիկումում դասավանդումն իրականացվել է նաեւ հայոց լեզվով:

1808 թ. Խոտինում կար ընդամենը 20 հայկական տուն, դեռեւս կանգուն էր Ս. Աստվածածին եկեղեցին: 1858 թ. հայերի թիվը Խոտինում եւ շրջակայքում 255 էր: Գնալով այդ թիվը նվազել է, եւ արդեն 1937 թ. ոչ մի հայ չի գրանցվել:

Հորոդենկա (Գորոդենկա) քաղաքում XVII–XIX դդ. եղել է հայկական գաղութ: Հայերն այստեղ են վերագաղթել 1670-ական թթ.: Մոլդավայից եւ Վալախիայից: 1706 թ. կառուցել են եկեղեցի:

1770 թ. եղել է 100 հայկական տուն, 1782 թ.՝ 80 տուն (410 մարդ): Հետագայում հայերի թիվը նվազել է (1784 թ.՝ 403 մարդ, 1808 թ.՝ 381 մարդ), եւ գաղութն աստիճանաբար մարել է: 1871 թ. Հորոդենկայում մնացել էր 10 տուն հայ, եւ դեռեւս գործում էր հայոց եկեղեցին:

Օդեսայի առաջին հայ բնակիչները (մոտ 30 ընտանիք) վերաբնակվել են XIX դ. 30-ական թթ. Աբերմանից եւ Գրիգորիուպոլիցի: XIX դ. վերջին Օդեսայում բնակվել է ավելի քան 1200 հայ: Օդեսայի հայերի թիվն ավելացել է Թուրքիայում իրականացված 1895–1896 թթ. հայկական կոտորածներից եւ 1915 թ. Մեծ եղեռնից հետո: 1880-ական թթ. կառուցվել է հայկական եկեղեցի (ավերվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ), բացվել է հայկական դպրոց, որը գործել է մինչեւ 1930-ական թթ.:

XIII–XVIII դդ. մեծաթիվ հայ բնակչություն է կենտրոնացել Դրիմի նշանավոր բոլոր կենտրոններում՝ Կաֆայում (Թեոդոսիա), Սուրխաթում (Հին Դրիմ, Եսկի Կրիմ, Ստարի Կրիմ), Սուդակում (Սուրոժ, Սուգդեա), Եվպատրիպոլում (Կեդզեւ, Կոզլով), Ղարասուբազարում (Բելոգորսկ), Աքմեչիթում (Սիմֆերոպոլ), Բախչիսարայում, Կերչում, Կազարատում, Պերեկոպում (Օր Գաբու), Արմյանսկում (Արմյանսկի բազար, Օրաբազար), Ինկերմանում, Խերսոնեսում եւ մոտ երկու տասնյակ հայկական գյուղերում: Դրիմում հայ բնակչության մեծ տեղաբաշխումն անմշան փոփոխություններով պահպանվել է նաեւ մոր եւ մորագույն ժամանակներում: XVIII դ. վերջին եւ XIX դ. սկզբին դրիմահայ գաղթավայրն ավելի է սովորացել: XIX–XX դդ. հայերը հիմնականում կենտրոնացած էին Հին Դրիմում, Ղարասուբազարում, Սիմֆերոպոլում, Եվպատրիպոլում, Արմյանսկում, Թեոդոսիայում, Կերչում, Յալթայում եւ մի շարք գյուղ հայաբնակ գյուղերում: 1860-ական թթ. նրանց թիվը հասնում էր 7000-ի, դարավերջին՝ 9000-ի, 1913–1914 թթ.՝ 14–15 հազարի՝ չհաշված հարյուրավոր այն ընտանիքները, որոնք ռուսահպատակություն չէին ընդունել: ➔ էջ 3

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը



Սկիզբը՝ թիվ 12–21

Խալափյանի ստեղծագործության մեջ պայմանականության գեղարվեստական հնարքի կիրարկմամբ առանձին տեղ ունի «Ոսկե միջինը» վիպակը։ Այս գործում ստեղծվում է բանտապետի եւ կալանավորի հարաբերություն ընդգրկող հոգեբանական վիճակ, եւ այդ վիճակի վերլուծությամբ զարգացվում են գոյափոխության կապերը։ Կալանավոր եւ բանտապետ՝ ազատագրված եւ ազատագրվող, թվում է՝ սրանք կյանքի ծայրաբեւեռներ են, սակայն իսլամական այս երկու բեւեռներն այնպիսի հարաբերության եւ վիճակների մեջ է դնում, որ կալանավորն ու բանտապետը, ազատագրվածն ու ազատագրվողը ներկայացվում են որպես միեւնոյն ճակատագրի կրողներ։ Կալանավորին պետք է հսկել, պետք է կանգնել նրա կողքին, որ չփախչի, ուրեմն հսկողը եւս նրա կողքին կորցնում է իր ազատությունը։ Այս ամենը ներկայացվում է որոշակի իրադրությունների եւ գործողությունների մեջ։ Համապատասխան վիճակներում միաժամանակ իսլամական կատարում է այլ կարգի հոգեբանական թափանցումներ։ Նախկին կալանավորը դառնում է հսկիչ

եւ փախուստի պահին սպանում նրան, ում հետ որոշել էին փախչել։ Մարդու փոփոխությունը պայմանավորված է ապրած վիճակների փոփոխությամբ. այդ վիճակների անցումների մեջ էլ իսլամականը ներկայացնում է իր հերոսների հոգեբանական տեղաշարժը, ինչի հիմքն անձնական շահն է, սեփական էզոն։

Գեղարվեստական պայմանականության սկզբունքներն օգտագործված են նաեւ «Մեռնող հառնող» վեպի առաջին մասում։ Վեպը նվիրված է ժամանակակից բանահավաքների կյանքին եւ կոչված է բացահայտելու այդ ժամանակից դուրս համարվող, բայց հետաքրքրական գործով զբաղված մարդկանց կյանքի ու աշխատանքի էությունը։ Նյութի ընտրությունը, հերոսների աշխարհը գրավիչ են, բանահավաքական աշխույժ գործունեության մեջ են Մաժանը (բանահավաքների ուսուցիչը), Տիրայրը, Արուսյակը, Տավրոսը, Ուրիշները։ Կա սեր, կան թափառումներ։ Հիմնական ասելիքը, սակայն, վեպը՝ որպես գեղարվեստական ամբողջություն, չի ստացվել։ Վիպական կառուցվածքի մարդկային խաթարվում է պատումի միասնական շնչի բացակայության պատճառով, ինչի հետեւանքով հանդիպում են դրվագային, շատ դեպքերում չկապակցվող, երբեմն էլ

ավելորդ ու պատահական հատվածներ, որոնք չեն մերվում վիպական ընդհանուր հյուսվածքին։ Օրինակ՝ Տիրայրի լսած հեռախոսային խոսակցությունը, ամերիկահայ զբոսաշրջիկների հատվածը եւ այլն։ Կան նաեւ անհարկի շեղումներ (Սազոնավի հատվածը), ձգձգված մասեր, կիսատ թողած, անավարտ պատմություններ։ Խախտվում են ժամանակային եւ տարածական սահմանները, բնական եւ պայմանական իրականությունները, խառնվում են ներքին կապերը, մեկ ուրվանկարի մեջ չեն միավորվում առանձին դեպքերի հյուսվածքները՝ մասունք առ մասունք հավաքել, ձայնագրել, գրառել ժողովրդի կյանքը, որ անցնող եւ մոռացվող մի աշխարհ է։ Անցնում են սերունդներն ու իրենց հետ տանում էպոս ու առասպել, հեքիաթ ու առակ, օրհանոց ու անեծք՝ մի ամբողջ քաղաքակրթություն։ Կա մի տաք շունչ, որ տանում է դեպի հին աստվածները (Ամահիտ) եւ արթնացնում բեղմնավորման, առողջ բնագոյի կենսական պահանջ։ Այդ ամենի հետեւանքով վեպի կառուցվածքը դարձել է փխրուն, ասելիքը՝ ցրիվ ու անկազմակերպ, մյուսի զարգացման պատճառակցական կապը՝ թույլ։

Խալափյանը ժամանակակից կյանքի տարբեր բնագավառների գեղարվեստական յուրացմամբ՝ իր հաջողված տարբեր վեպերի ու վիպակների մեջ ստեղծում է արդիական նկարագիր ունեցող հերոսների մի շարք, որոնց բնորոշ են հոգեբանական խորությունն ու կյանքի ճշմարտության որոնման ձգտումը։ Այդ հատկանիշների շնորհիվ իսլամական հերոսներն ստանում են կենսական շունչ եւ բնականություն։

Բոլոր դեպքերում խորքի, խորքային պական զգացվում է։ Այդ իսկ պատճառով նրա կերպարները չեն կարող առանձնացնել եւ բարձրացնել որպես ժամանակի իրենց մեջ խտացնող հերոսների։ Որոշակի չէ նաեւ հեղինակային հայեցակետը, փոխափայլական իմաստավորումը։ Իսկ նրա լեզվամտածողությամբ, ոճին ու բանարվեստին ուղղված հայացքի դիմաց բարձր գրականությունն ու ինքնատիպ գեղագիտությունն չէ։

Ժամանակի էությունն արտահայտող գրական հերոսի որոնման այլ ճանապարհով է ընթանում Պերճ Չեթունցյանը։ «Կլոդ Ռոբերտ Իգերի» վեպում եւ «Ամենատխուր մարդը» վիպակում նա անդրադառնում է 20-րդ դարի երկու խիստ բնորոշ երեւոյթների՝ փաստական հիմքի վրա ստեղծելով մեր ժամանակաշրջանի երկու մեծագույն ողբերգությունների գեղարվեստական անդրադարձը։ Նա այս ստեղծագործություններում ժամանակի խնդիրները փորձում է լուծել դարաշրջանի համար կարեւորություն ունեցող

երեւոյթների չափանիշով։ Մի դեպքում՝ դարի մեծագույն ոճի՝ ատոմային ռումբի նետում Հիւրոսիմայի վրա, 200000 զոհ, ճառագայթային հիվանդություն, ոճիրը գիտակցելու եւ հրապարակայնացնելու անհավոր ճիգ ու մեղքի գիտակցում։ Մյուս դեպքում՝ կեսողարյա բանտարկություն, տանուկ տված կյանք, տանուկ տվածի վերստին գյուտ, ինչը պայմանավորվում է ստեղծագործման ժամանակաշրջանը։

«Կլոդ Ռոբերտ Իգերի» վեպում հեղինակն ասելիքի հիմնական շեշտը դրել է պետական առաջադրանքով սարսափելի հանցանք գործած հերոսի ինքնագիտակցության գալու եւ իր կատարած հանցանքից հետո սեփական անձի հոգեվերլուծական դատավարություն կատարելու հարցի վրա։ Կլոդն սկսում է գիտակցել, որ հանցանքը կատարելու ժամանակ ինքը եղել է ռազմական մի հզոր մեքենայի պտուտակ։ Հանցանքից հետո նա մեքենայի մասից, առաջադրանք կատարող պտուտակից փորձում է դառնալ իր անհատական մտածողությունն ու զգացողությունն ունեցող մարդ եւ հենց այդ պահին էլ հանրությունն իր «հերոսին» որակում է որպես հոգեկան հիվանդ ու մեկուսացնում։ Մեղքի գիտակցումից հետո Կլոդը կարծես դառնում է Հիւրոսիմայի զոհերից մեկը։ Նրան իր իսկ կատարած հանցանքի զոհ են համարում թէ վիեճակագրի փոխափայլ Գյունտեր Անդերսը եւ թէ ճառագայթային ախտով հիվանդ 30 ճապոնացի աղջիկներ։ «Դուք եւս այնպիսի զոհ եք, ինչպիսին ենք մենք»,— գրում են նրանք։ Կլոդի մեջ հասունացող հոգեբանական ճգնաժամը մղում է ինքնասպանության, սակայն Գյունտեր Անդերսի նամակը կանխում է նրա արարքը։ Հեթոնցյանը վեպում ստեղծում է երկու ներհակ կացություն՝ կրողներն են Իգերիյն եւ վեպի պայմանական կառուցվածքի մեջ իր տեղն ունեցող Նապոլեոն Բոնապարտը։ Իր մեղքը գիտակցող եւ այլ ուժերի ստեղծած ոճիրն իրականացնող պտուտակ-անհատը եւ այդ ոճիրը նախապատրաստող եւ գործին ընթացք տվող տիրակալներից մեկը՝ Բոնապարտը, որի խոսքերը՝ ասված Իգերիյին, բնականաբար, պետք է ունենային այսպիսի տրամաբանություն. «Դու կատարող ես, <...> քեզ ոչ ոք իրավունք չունի մեղադրելու։ Դու ինքը ել չունես։ <...>։ Եթե յուրաքանչյուր կատարող մտածի, աշխարհում ոչինչ չի կատարվի, ոչինչ չի փոխվի...»։ Մարդուն մեքենա դարձնելու, անգիտակցի կատարողի վերածելու պահանջ եւ կատարող մեքենա դարձած մարդու վերստին մարդկայնացում։ Երկու հզոր ուժ, որոնց բախումն էլ ստեղծում է մեր օրերի բարոյական բնույթի կարեւորագույն խնդիրներից մեկը։ ➔ էջ 4, 6

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑՈՒՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԻԶԵԼՆԵՐ ԵՒ ԲԵՄԱՐԿԵԼՆԵՐ ԹԵՐԻ՝ 1830–1918 ԹԹ. ՀՈՐԵՒՈՐ-ԼՈՒՍՎԱՐՉԱԿԱՆ ԴՈՐԾՈՒՆԵՐԻԹՅՈՒՆԸ

← էջ 2

Դրիմահայ ամենամեծ գաղթավայրն էր Կաֆան։ Խոշոր գաղթավայր էր Սուրխաթը՝ մերձակա Սուրբ Խաչ վանքով, ավելի քան 10 եկեղեցիներով։ Հայության մշտնավոր կենտրոն էր Ղարատուբազարը՝ առաքելական եւ կաթոլիկ հայ համայնքներով։

Հայերը Դրիմում ծավալել են նաեւ շինարարական լայն գործունեություն՝ կառուցելով հոգեւոր եւ քաղաքացիական բազում շինություններ։ Միայն Կաֆայում XII–XVI դդ. կառուցել են շուրջ 30 եկեղեցի։ Մի քանի տասնյակ եկեղեցիներ են կառուցել Սուրխաթում, Ղարատուբազարում, Աքմեջիթում, Արմյանսկի բազարում, Սուրակում եւ այլուր։ Հայկական մշտնավոր կառույցներից են մինչեւ օրս պահպանված Ստարի Կրիմի Սուրբ Խաչ վանքը՝ իր տաճարով (1358 թ.), Կաֆայի Սուրբ Հովհաննես Սկրտիչ (1348 թ.), Սուրբ Սարգիս (XIII դ.), Սուրբ Միքայել ու Գաբրիել հրեշտակապետների (1408 թ.) եւ Սուրբ Ստեփանոս (1491 թ.) եկեղեցիները, Բախչելի գյուղի մոտ՝ Սուրբ Փրկիչ վանքը (XIV դ.)։

XVIII դ. վերջին Ռուսաստանում հայ համայնքներին տրված արտոնություններն ավելի են խթանել հայերի ներհոսքը Դրիմ։ Նրանց թիվը XIX դ. վերջին — XX դ. սկզբին հասել է շուրջ 20 հա-

զարի, այդ թվում Սիմֆերոպոլում՝ 2000, Ստարի Կրիմում՝ 1750, Ղարատուբազարում՝ 1800, Կերչում՝ 700, Թեոդոսիայում՝ 1000 հոգի։

Դրիմը Ռուսաստանին միացնելուց (1783 թ.) եւ Սիմֆերոպոլը մահաճային կենտրոն դառնալուց հետո շարունակ աճել է նաեւ նրա հայ բնակիչների թիվը՝ 1897 թ. կազմելով մոտ 5 հազար։ XX դ. առաջին երկու տասնամյակներին հայ համայնքն անընդհատ մեծացել է Արեւմտյան Հայաստանից տեղահանված հայ գաղթականների հաշվին։

1897 թվականից Սիմֆերոպոլի Սուրբ Աստվածածին եկեղեցուն առընթեր կազմակերպվել է աղքատ ծխականների հոգաբարձություն։ XX դ. սկզբին գործել է հայկական ծխական երկու դպրոց՝ 8 ուսուցչով եւ 82 աշակերտով։

Արմյանսկ (Օրաբազար, Արմյանսկի բազար) քաղաքը հիմնել են Օր Գաբուլի (Պերեկոպ) հայերը 1736 թ., երբ կոմս Բ. Մինիխի գլխավորած ռուսական զորքերի արշավանքի հետեւանքով Պերեկոպն ավերվել է։ Սկզբնական տարիներին Արմյանսկը զուտ հայկական գյուղաքաղաք էր։ XIX դ. առաջին կեսին բնակչության մեծամասնությունը հայ էր։ 1806 թ. կառուցվել է քաղաքի առաջին հայկական եկեղեցին, 1861–1862 թթ.՝ Սուրբ Աստվածածին քարակերտ եկեղեցին։ XIX–XX դդ. գործել է հայկական ծխական դպրոց,



1903 թվականից՝ եկեղեցուն կից ծխականների հոգաբարձություն։

Եվպատորիայի (Կեռզել, Կոզլով) հայկական համայնքը սկզբնավորվել է XIV–XV դդ.։ Թերակոպին Ռուսաստանին միացնելուց հետո համայնքն սկսել է վերականգնվել (1820-ական թթ.՝ մոտ 100 տուն)։ XX դ. սկզբին, Արեւմտյան Հայաստանից հայ գաղթականների հոսքի հետեւանքով, հայերի թիվը հասել է շուրջ 1000-ի։ XIX–XX դդ. գործել են Սուրբ Նիկողայոս եկեղեցին եւ նրան կից հայկական ծխական դպրոցը։

Թեոդոսիայի (XIII–XVIII դդ.՝ Կաֆա) հայկական գաղութը սկզբնավորվել է XI–XII դդ., երբ այնտեղ հիմնվել է դրիմահայոց ամենաինքն կառույցը՝ Սուրբ Սարգիս եկեղեցին։ Կաֆան միջնադարյան դրիմահայ գաղթավայրերի հասարակական-քաղաքական, տնտեսական, եկեղեցական եւ մշակութային կյանքի կենտրոնն էր, ոչ պաշտոնական մայրաքաղաքը։ XV–XVIII դդ. այստեղ գործել է մոտ 30 հայկական եկեղեցի։ XX դ. Կաֆայի 70

հազար բնակիչից ավելի քան 46 հազարը հայեր էին։ Եղել է հայ եպիսկոպոսանիստ քաղաք։

Դրիմը Ռուսաստանին միացնելուց հետո Կաֆայի հայ գաղութն սկսել է աստիճանաբար վերականգնվել։ Ռուսաստանի կայսր Պավել I-ի՝ 1799 թ. հոկտեմբերի 29-ի հրամանագրով Թեոդոսիայում կանգուն մնացած 22 հայկական եկեղեցիներից 4–ը, այդ թվում՝ Սուրբ Սարգիս եւ Սուրբ Միքայել ու Գաբրիել հրեշտակապետաց եկեղեցիները վերադարձվել են հայերին՝ «Հայկական սյուրբդա» հիմնելու համար։ XIX դ. Օսմանյան կայսրությունից եւ Նոր Նախիջևանից Դրիմ անցած հայ գաղթականության որոշ մասը հաստատվել է նաեւ Թեոդոսիայում, գլխավորապես՝ հայկական թաղամասում։

Հարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մեծ եղեռնի արձագանքներն ու վավերագրությունը «Հայաստան» ռաբբերականի էջերում...



«Հայաստան» օրաթերթը պատմական ասպարզ ելավ գորավար Անդրանիկի անմիջական ջանքերով ու պատասխանատվությամբ: Չորավարը գտնում էր, որ արեւելահայ պարբերականները բավարար չափով չեն լուսաբանում տեղահանված արեւմտահայության կյանքն ու կարիքները: Թերթի խմբագիր նշանակվեց արեւմտահայ ճանաչված արձակագիր Վահան Թոթովենցը:

Թերթն իր ողջ գործունեության ընթացքում ուշադրության առանցքում պահեց առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արեւմտահայության ունեցած սարսափելի աղետի ողջ գործընթացը՝ վերապրողների ու ակամատեսների աչքերով ու հիշողությամբ լուսաբանելով արեւմտահայկական գավառներում տեղի ունեցած ողբերգությունը:

Դրանով իսկ «Հայաստան» պարբերականն առաջինն ստեղծեց Մեծ եղեռնի վավերագրությունը, որը հոգեւոր ու բարոյական հուշարձան դարձավ մեր ժողովրդի հոգում:

Հայ պարբերական մամուլի կարեւոր հիշարժան օրգաններից մեկը 1917 թ. գարնանը (ապրիլին) Թիֆլիսում հիմնադրված «Հայաստան» օրաթերթն է, որը սովորաբար անվանում են գորավար Անդրանիկի պարբերական: Նրա շուրջը համախմբվել էին արեւմտահայ գործիչներ (գրողներ, մանկավարժներ, գեներլե և ռազմական ոլորտի ներկայացուցիչներ): Թերթում հնչող կարծիքները, մտորումները, վերլուծականները, խմբագրականները կարելի է անվանել արեւմտահայության հասարակական տեսակետներ: Պարբերականի խմբագիրը՝ արեւմտահայ տաղանդավոր գրող Վահան Թոթովենցը, իր տաղանդի ուժով եւ գործությամբ ձեռնամուխ եղավ համահայկական չափանիշներով եւ բովանդակությամբ պատմաքաղաքական, գրական, մշակութային, տեղեկատվական բնույթի պարբերական ստեղծելու գործին: Եվ նա հասավ իր նպատակին: «Հայաստանը» դարձավ հայրուրավոր եւ հազարավոր մարդկանց սպասված թերթը:

Ի թիվս այլ կարեւոր հիմնահարցերի՝ «Հայաստանի» էջերում, սկսած նրա առաջին համարներից, էապես լուսաբանվում էին հայոց Մեծ եղեռնի, Արեւմտյան Հայաստանի կորստի թեմաները: Ծանրախորհուրդ խորհրդածություններով, հուսահատական տրամադրություններով էր շնչում թերթի յուրաքանչյուր համարը՝ տխրություն ու վշտի զգացում սփռելով հայության շրջանակներում: Վիշտը խորն էր, անհատակ, եւ դա զգացվում էր թերթի յուրաքանչյուր նյութից: Արեւմտահայ գրագետ Լեւոն Թութունջյանը սույն կերպ էր արձանագանջում վերոնշյալ իրողություններին. «Բայց այսօր աչքերս արտասուք չունին, եւ հոգ-

լոյս մէջ ժպիտ չկայ՝ խոյանքի: ...Մեր բոյնը ազգավներն են թառեր, եւ մենք վիրաւոր թելերով հանգչելու անկիւն չունինք: Հայրենիք, մինչեւ այն օրը, երբ այլեւս տուն արցունք չունենաս, մինչեւ այն օրը, երբ քեզի տանք ապրելու իրաւունքիդ ազատ վերականգման հոյակապ Տոնը... Հայրենիք, ամեն ինչ քու արեւիդ համար...» («Հայաստան», Թիֆլիս, առաջին տարի, 21 ապրիլի 1917 թ., թիվ 4):

«Հայաստանը» նկարագրում էր արեւմտահայկական մահազանգերում ու զավառներում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները, տալիս համապարփակ պատկերն արեւմտահայության կրած մեծագույն ողբերգության: Տխուր ու թախծոտ երաժշտություն էր ասես հնչում պարբերականի յուրաքանչյուր համարում: Ավերակված հայրենիքի եւ ողջակիզված ժողովրդի հանդեպ հոգեկան պատքի ու պարտավորվածության սրված զգացումը ներհատուկ ու բնորոշ էր «Հայաստանի» քսաներեքամյա կապուտաշյա խմբագիրն եւ ողջ խմբագրականին: Խմբագիրն իր ուղեղի եւ արյան բոլոր բջիջներով զգում եւ գիտակցում էր, թե ինչպիսի անմախաղեպ մասշտաբի խորշակ է անցել իր հայրենիքի երկնականարով: Եվ այդ զգացողությունը նա այսպես զգացական է արտահայտել «Ես ծաղիկ չունեմ» փոքրիկ ակնարկում. «Իմ ծաղիկները ես բաշխեցի ուրիշներուն, եւ իմ գարնան կողովը պարապ է: Արծաթ չըստացայ ես իմ ծաղիկներուս փոխարեն, այնպէս տուի ես բոլորին իմ գարնան կարմիր վարդերը...»

Ես հազիւ կը դողդոջեմ ամոնց թարմութեան յիշատակով» («Հայաստան», 1917 թ., թիվ 17): ➔ էջ 5

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

➔ էջ 3

Հատկապես ամեն ինչ մեքենայացնող եւ մարդկանց մեքենայի մասեր դարձնող մեր դարաշրջանում անչափ մեծ նշանակություն է ստանում անհատականություն լինելու, գիտակցական ինքնուրույն կարողություն ունենալու խնդիրը: Միայն այդ դեպքում կարող ես մարդկանցից պահանջել պատասխանատվություն իրենց կատարած գործերի հանդեպ, եւ միայն այդ դեպքում կարող է ոճիրը մեղքի գիտակցություն ծնել եւ մեղքի բարդույթ առաջացնել մարդու մեջ: Ոճիրի եւ մեղքի հարցադրումը թեւեւ գրական նորություն չէ, բայց դա ամեն պահի ունի իր որոշակի տեսքը, պարունակությունը: Այս առումով Չեյթոնցյանի «Կլոդ Ռոբերտ Իգերլի»-ն բերում է հարցադրման նոր յուրացում եւ այդ ամենը բխեցնում ժամանակաշրջանի ոգուց:

Հարցադրումը եւ նյութը գրականություն են բերում համապատասխան հերոսի: Այս առումով Չեյթոնցյանի ստեղծած հերոսների պատկերաշարը նորություն է հայ գրականության մեջ:

Վեպում ընդգրկված հերոսները ոչ այնքան կերպար դառնալու, որքան խորհրդանշի վերածվելու բնույթ ունեն: Այդ համագամանքին զգալիորեն նպաստում է նաեւ վեպի կառուցվածքի պայմանականությունը: Ընդհանրապես Չեյթոնցյանի գրեթեմեծին հատկանշական է իրականի հենքի վրա ձեւավորվող պայմանական ու մասամբ երեւակայական պատկերամտածողության առկայությունը: Իրականը պատկերվում է եւ երեւույթների ու վիճակների բնական տեսքով, եւ վերափոխված: Կյանքի իրականությունն ու զեղարվեստական իրականությունը, տարբեր լինելով հանդերձ, հիմքում նույնական են: Միայն թե զեղարվեստական իրականության մեջ կյանքի իրականությունը գործում է վերափոխված, պայմանական ձեւով:

«Կլոդ Ռոբերտ Իգերլի» վեպի հետ շատ կողմերով սերտ կապ ունի «Ամենատխուր

մարդը» վիպակը. նյութը իրական, վավերական պատմություն է, ինչի զեղարվեստական պատկերման մեջ եւս տեղ ունեն պայմանականության միջոցները:


Սիրած աղջկան՝ Գեային անպատվությունից փրկելու համար Ստրաուդը ելնում է Տղամարդ ծեծողի դեմ եւ այն պահին, երբ Տղամարդ ծեծողը կարող էր իրեն սպանել, ինքը, ուրիշ ելք չունենալով, ատրճառակի կրակոցով սպանում է նրան: Թվում է, թե ոճիրը կատարված է, սակայն իրականում սա ոճիր չէ, որովհետեւ Ստրաուդը թե սպանությունից առաջ եւ թե հետո չի գիտակցում իր հանցանքը, քանի որ հանցանք չկա, հոգու վրա ծանրացած մեղք չկա: Այդ մեղքը դրսից, դիպվածով է պարտադրվում նրան, նա դատապարտվում է մահապատժի, այնուհետեւ՝ ցմահ բանտարկության: Եվ քանի որ Ստրաուդը մեղքի զգացողություն չունի, եւ քանի որ նա իր անցյալի վիճակների մեջ եղել է մաքուր, ուստի նա կարիք չունի ապաշխարանքի: Ստեղծված բանտային իրավիճակում, ստեղծագործական աշխատանքի շնորհիվ, նա փորձում է հասնել ներքին ազատության: Ստեղծվում է յուրահատուկ իրադրություն. ազատություն բանտային պայմաններում, եւ ազատագրություն՝ ազատության պայմաններում: Իրենց հասարակական դրությամբ տարբեր են նաեւ այս վիճակները կրողները՝ Ստրաուդը եւ երկրի թագավորը: Երկու հակադիր վիճակներն ստեղծում են նաեւ հակադիր կերպարներ: Այդ հակադրությունն առկա է նաեւ նրանց կյանքի մանրամասների մեջ: Նրանք հասակակիցներ են, բացի դա՝ նույն օրն է որոշվել նաեւ նրանց ճակատագիրը. մեկը դարձել է թագավոր, մյուսը՝ կալանավոր: Ստեղծվում է անսահման հնարավորություններ ունեցող, սակայն իր հնարավորությունների եւ ազատության մեջ սահմանափակված, իր իսկ ստեղծած կամ իրեն ենթակա օրենքին, իրավունքին, կարգ ու կանոնին գերի թագավորի կերպար-խորհրդանշան եւ ամեն ինչ կորցրած,

շղթաներին զամված, սակայն մտքի ճախրամբ եւ մտածողության ազատություն ունեցող բանտարկյալի իրական, ճշմարիտ կերպար:

Թագավոր—Ստրաուդ հակադրությունը յուրովի շարունակվում է բանտապետ—Ստրաուդ հարաբերության մեջ: Բանտապետը ցավ է զգում, որ ինքն անկարող է սահմանափակել մարդու հնարավորությունները: Նա իրեն ոչ մի կերպ չի կարող մերել իր հսկողությամբ միջազգային ճանաչում գտած բանտարկյալ-գիտնականի գոյության համար եւ, ի վերջո, ստեղծագործ մտքի առջեւ զգալով իր անգործությունը՝ ստիպված ասում է. «Ես սովորական բանտապետ եմ... Ինձ սովորական կալանավոր տվեք...»:

Եթե թագավորի, մասամբ նաեւ բանտապետի կերպարները վերածվում են մաքուր խորհրդանշանների, ապա Ստրաուդի կերպարն ունի հոգեբանական հիմք: Ստրաուդը բանտում դեռեւս մեկուսացված չէ աշխարհից: Դեռեւս կա մոր սերը, Գեայի հիշատակը, որոնք թեւեւ նրա եզակի կապերն են աշխարհի հետ, բայց շարունակում են ապրեցնել նրան: Ստրաուդի եւ արտաքին աշխարհի կապի տեսակետից հաջող է լուծված վիպակի երրորդ գլուխը. Ստրաուդը մտովի ոգեկոչում է ծանոթներին՝ մորը, Գեային, Տղամարդ ծեծողին, որոնց հիշատակներով էլ պայմանավորվում է իր գոյությունը: Առանց այդ հիշատակների՝ նա կկորվեր արտաքին աշխարհից ու կմեկուսանար: Հիշողությունն այս դեպքում դառնում է գերագույն պարգև: Հիշողությունը կյանք է վերամարմնավորում:

Ստրաուդի ներքին ազատությունն սկսվում է հիշողություններից, իր համար



ճանապարհի հարթում երեւակայածին տարբեր հայտնություններով եւ ավարտվում պատահական, բայց հիմնավոր մի գյուտով: Կիսագրագետ Ստրաուդը, որն օրերը լցնում էր տարբեր գրքերի ընթերցանությամբ, բանտի պայմաններում դառնում է մեծ գիտնական՝ թռչնագետ, եւ ցմահ բանտարկյալի իր անհայտությունից դուրս գալիս՝ դառնալով 20-րդ դարի հանրածանոթ դեմքերից մեկը, հանրային գիտակցության մեջ հաստատելով իր տեղն ու դերը:

Հեղինակը վիպակի վերջում երկատում է Ստրաուդին: Երկու Ստրաուդների խոսակցությունը բացահայտում է կյանքի այն արժեքլիշտը, որ սահմանված է եղել նրանցից յուրաքանչյուրի համար: Երիտասարդ Ստրաուդին օտար է ծեր Ստրաուդն իր բանտային կյանքով ու գիտնականությամբ: Երիտասարդ Ստրաուդը մտապատկերում ունի իր կյանքի սովորական շարունակությունը, ինչն առնչություն չունի բանտի հետ: Ծեր Ստրաուդն իր հերթին մոռացել է երիտասարդ Ստրաուդին, նա հարմարվել է բանտային կյանքին, եւ թվում է, թե այդտեղ է անցել նրա ամբողջ գոյությունը: Գալատագիրը Ստրաուդի երկու հասակները, ապրած կյանքի երկու վիճակներն օտարացնում է իրար, այդ երկու հասակներն այլեւս իրար չեն ճանաչում: ➔ էջ 6

ՄԱՐԿ ԿՈՐԼԵՐ



«Այդ հարյուրապետն առաջինն էր հեթանոս աշխարհի այն շատ մարդկանցից, որոնք ուղղվեցին դեպի խաչը», — գրում է Հելմուտ Գոլմիթերը՝ Ղուկասի Ավետարանի մասին իր մեկնաբանության մեջ: Այլ կերպ ասած՝ այդ մարդու կերպարը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանզի լինելով հեթանոս՝ նա դարձավ քրիստոնյա Քրիստոսի մահից անմիջապես հետո: Նրա վկայությունն ընդգծում է այդ մահվան նշանակությունը. եկեղեցին, որ հիմնված է Քրիստոսի զոհաբերության վրա, կառուցվում է, ու արդեն դուրս գալիս հրեա ժողովրդի ներքին շրջանակից, քանզի Աստված ցանկանում է ողջ աշխարհի փրկությունը: Հարյուրապետը հեթանոս է արդյոք: Ար-

դյոք նրա խոսքերը քրիստոնեական հավատքի արտահայտություն են: Պետք է պատասխանել այս հարցերին մախքան պնդելը, թե հարյուրապետը հեթանոսներից ծնված առաջին քրիստոնյան է: Հարյուրապետի ծագման հարցն ավելորդ հարց չէ: Հարյուրապետները ծառայում էին հռոմեական բանակում. այդ ժամանակվա ողջ աշխարհը ներկայացված էր հռոմեական զորամիավորումներում: Մինչև անգամ զորքերի հիմնական մեջ կարելի էր տեսնել զավառացիների, քանզի պետք էին ուժեր լայնարձակ կայսրությունը պահպանելու համար, իսկ մայր երկրից (metropolia) բերված մարդիկ չէին բավականացնում: Հարյուրապետին նվիրված մի ուսումնասիրության մեջ Carl Schnaeider-ը հավաստում է, որ «Արդեն Հիսուսի ժամանակներում Պաղեստինում տեղակայված օժանդակ զորախմբերից հարյուրապետ կարող էր դառնալ ամենատարբեր ազգերից՝ սիրիացիներից, սամարացիներից, իսպանացիներից, դալմատներից, կելտերից, գերմանացիներից որեւէ մեկը... Արդ, միթե Պիղատոսի օրոք չի կարելի պատկերացնել մի հեթանոս հարյուրապետի, որը սակայն, մանկությունից ի վեր, ներգրավված էր հրեական կրոնի մեջ կամ ծառայելով Պաղեստինում՝ իր համար հայտնաբերել էր Աստծո ու նրա օրենքի հրեական գաղափարները: Բոլոր դեպքերում՝ այդ մարդն այլևս չէր կարողանալու խաչի տակ ներկայացնել հեթանոս աշխարհի: Այս դիտարկումը վերաբերում է օժանդակ զորագնդերին: Բանակի սիրտը, նրա ընտրախմբը, միայն ու միայն հռոմեացի քաղաքացիներից բաղկացած լեգիոններն էին: Հարյուրապետների հիմնականում հա-

մալրվում էր կայսեր պաշտոնական պրետորական կոհորտաների զինվորականներից: Կայսրը «ձգտում է պահպանել լեգիոնի սպայակազմի հռոմեական բնույթը»: պետք է սպասել եւս մեկ դար, որպեսզի իրավիճակն արմատապես փոխվի: Սեպտիմուս Սեվերիուսը գավառի լեգիոններին, որոնք իրեն կայսր են հռչակել, վճարում է իր թագի գինը՝ հռոմեական ծագում ունեցող հարյուրապետության վերացումը: Բայց դա կատարվում է երկրորդ դարի վերջում: Հռոմեական լեգիոնները զորքի իտալական հիմնականում էին: Բայց Հիսուսի ժամանակ Պաղեստինում չկային լեգիոններ: Մինչև 66 թվականի մեծ խռովությունը միայն օժանդակ զորագնդեր էին տեղակայված այնտեղ: Այդ զորագնդերը Հռոմը հավաքագրում էր երկրի բնակչությունից: Բայց այդ զինվորների հավաքագրումը կատարվում էր ոչ հրեա բնակչության շրջանում (հրեաներն ազատված էին զինվորական ծառայությունից): Հուլիոս Կեսարից ի վեր, իսկապես, կայսրության հրեաներն օգտվում էին բացառիկության օրենքից: Դա հատուցումն էր կատարած ծառայության դիմաց կամ նշան էր հռոմեացիների զգուշավորության, որոնք վախենում էին խռովություններից ու դասալքություններից: Օգոստոս մեծ կայսրը, նրան հաջորդած Տիբերիուսը, որոնք իմաստուն քաղաքագետներ էին, հրեաների նկատմամբ որդեգրել էին հաշտվողական դիրքորոշում: Եթե հետագայում իրադրությունը փոխվեց դեպի վատը, դրա պատճառն ավելի շուտ հրեաների ազգայնամոլական մոլեռանդությունն էր եւ ոչ թե հռոմեական կայսրերի քաղաքականությունը: Ուստի Պաղեստինի բոլոր օժանդակ զո-

րագնդերը հրեական չէին՝ ըստ զինվորական ծառայությունից ազատվելու օրենքի: Սակայն մեր խնդիրը դեռևս լուծված չէ: Քանզի կային նաեւ հռոմեական հրեաներ: Հռոմեացիները հռոմեացիներ էին պատրաստում. այդ հրեաներին ընձեռում էին կայսրության քաղաքացի լինելու իրավունք: Այդ արտոնությունը ոմանք ձեռք էին բերում փողի միջոցով, ոմանք էլ տրվում էր նրանց արժանիքների կամ ծառայությունների դիմաց: Մենք լավ ենք ճանաչում մի հրեայի՝ Սոդոս Տարսոնացուն, որը Հռոմեական կայսրության քաղաքացի էր, «ուժ օրվա թլիստված, Իսրայելի ազգից, Բենիամինի ցեղից, եբրայեցի՝ եբրայեցիներից» (տե՛ս Փիլիպ. Գ 5), Պողոսը, որը ձերբակալվեց Երուսաղեմում, հարցնում է հարյուրապետին. «Ձեզ թույլատրված է դազանակով ծեծել հռոմեական քաղաքացու»: Գալիս է տրիբուն Կլաուդիոս Լիզիասը: Նա ասում է, որ մեծ ծախսերի զնով է ձեռք բերել հռոմեացի լինելու իր իրավունքը, որին Պողոսը պատասխանում է, որ նա դա ստացել է իր ծնողներից: Նրանք դա գնած լինեին թե ոչ, քիչ կարելու է, քանզի այստեղ ունենք կայսրության հրեա քաղաքացու օրինակ: Կարող էին այդպիսիներ լինել նաեւ բանակում, որոնց հավաքագրել էին Պաղեստինում՝ ելնելով նրանց հռոմեացի լինելու իրողությունից: Երկու պատճառ բացառում է այդ հնարավորությունը: Նախ՝ զինվորական ծառայությունից ազատումը տարածվում էր նաեւ «հռոմեական հրեաների վրա»: Իսկապես, «այդ արտոնությունները չէին տրվում միայն հրեական ազգության մարդկանց (peregrini), այլևս նրանց, ովքեր դարձել էին հռոմեական քաղաքացիներ»: ➔ էջ 7, 8

Մեծ եղեռնի արձագանքներն ու վավերագրությունը «Հայաստան» ռաբբերականի էջերում...

← էջ 4
Պետք է արձանագրել, որ «Հայաստան» թերթում էր, որ առաջին անգամ լայնորեն քննարկվում էին արեւմտահայության ճակատագրին առնչվող հարցերը՝ հետեղեռնյան շրջանում, «արեւելահայ հասարակական շրջանների ուշադրությանն էին հանձնվում նրա (արեւմտահայության)» — Ա. Կ.) փրկության եւ գոյության հրատապ խնդիրները, փորձ էր արվում կոնկրետ քայլեր անել, հայ ժողովրդի երկու հատվածների միասնության հաստատման եւ ամրագրման, ինչպես եւ միասնաբար գործելու ուղղությամբ» (Աղաքյան Ծ., *Անդրանիկ դարաշրջան դեպքեր, դեմքեր, ե., 1994 թ., էջ 579*): Այո, թերթը տեղագրվել էր կերպով ուղիներ էր փնտրում եւ մախքանում արեւմտահայության բեկորները փրկելու ուղիները: Բայց եւ չէր մոռանում կորուսյալ հայրենիքի ոչ մի հատվածը, նրա անցյալն ու ներկան: Ծանր ու մղձավանջային էր հետեղեռնյան իրականությունը. «Այնքան մերկ ու խոպան ներկայի մասին դժբաղդաբար աւելի խօսքեր չիկան գրելու» («Հայաստան», 1917 թ., թիվ 17): Բայց այդ խոսքերը, այնուամենայնիվ, գրվում էին՝ թերթի էջերում առաջինն ստեղծելով «Մեծ եղեռնի պատմության տարեգրությունը»: «Մեծ եղեռնի պատմությունը» խորագրի ներքո՝ գրեթե յուրաքանչյուր համարում, ընդարձակ ծավալով նյութեր էին հրապարակվում: 1917 թ. մայիսի 7-ին «Տաճկական պատերազմի անցքերը» վերնագրով նյութն օրագրային նկարագրություն է վանի եւ Մշո դաշտի գյուղերում քողարկված ավազակապետների կատարած անօրինակ ոճիրների վերաբերյալ: Նշվում է, որ պատերազմն սկսվելու առաջին իսկ ամիսներից հայկական բնակավայրերում սոսկալիորեն լարված իրավիճակ էր: Որոշ համարներում նյութերի զգալի մասը (էջերի մոտ կեսը եւ ավելին) նվիրված էր արեւմտահայոց ապրած գողգոթային: 1917 թ. օգոստոսի 10-ի համարում՝ առաջին էջում, ներկայացված են Տարոն աշխարհի հոգեւորական գոհերը: Նրանց ցուցակը գլխավորում է Տարոնի հոգեւոր առաջնոր-

դը՝ իր գործունեությամբ այնքան առանձնահատուկ եւ նշանավոր Վարդան վարդապետը (Վարդան Ծ. վրդ. Հակոբյան): Նրա մասին ասվում է, որ իր ազդեցիկությունն ու հմայքը տարածված էր նաեւ Մշո դաշտի եւ Մուշ քաղաքի քրդերի եւ թուրքերի վրա: Ահա թերթը մեզ է փոխանցում նրա վիթխարի գործունեության ամբողջական պատկերը. «25 տարի է հետե յեղափոխական շարժումներու ուղն ու ծուծը, գոյութան հիմնաքարն ալ այս եկեղեցականը եղած է Տարոնի մէջ, եթե ան գոյութիւն չունենար, ոչ մեկ յեղափոխական պիտի ապրէր Սասունի եւ դաշտի մէջ» («Հայաստան», 1917 թ., թիվ 92): Նույն այս համարում եղեռնի զոհ հայ երեսփոխաններից ներկայացված է Հարություն Ծանկուլյանը: Իսկ «Մեծ եղեռնի պատմությունը» շարքում տպագրված է «Եղեռնի օրերը Հայաստանի մէջ» նյութը. տրված է Սղերդի հայության բնաջնջման տարեգրությունը: Հայաստանի տարբեր դաշտի բարգավաճ բնակավայրերից մեկն էր, որը 1915 թ. ապրիլ-մայիսին ենթարկվեց թուրքական խորշակին: Ընդ որում՝ կատարվածի ձեռագիրը նույն էր, ինչ մյուս բնակավայրերում: Նախ՝ հայ բնակչությունից հավաքեցին զենքն ու զինամթերքը, ապա բռնագրավեցին անասունները, պարենի պաշարները, հետո պաշտոնյաներն ու ոստիկանները նորից վերադարձան եւ դաժան կտտանքների ենթարկելով բնակիչներին՝ ձգտեցին անգամ դանակներն ու ծակող գործիքներն ամբողջությամբ բռնագրավել: Հետագայում արդեն հայտնի է: Հետաքրքիր է, որ առերեսույթ թուրքից էլ խել էին զենքը. «Երեսույթապետ ցերեկ ժամանակ թուրք հասարակութիւն էն զենքեր կը հաւաքեն, իսկ զիշերը կրկին կը վերադարձնեն ու կը զինեն ամենայնեւթին թուրք անհատը» (նույն տեղում): Թերթի էջերում հաճախ էին նյութեր գետեղվում՝ եղեռն տեսած հայ բազմահազար որբերի կացության ու հիմնահարցերի շուրջ: Նաեւ գործնական բնույթի հարցեր ու հարցականներ էին արծարծվում: Ինքը՝ խմբագիր, բանաստեղծ, արձակագիր ու հրապարակագիր Վ. Թոթովենցը, որբերին նվիրված տխրաթախիծ ձոներգ



էր հնչեցնում «Հայաստանի» էջերում. «Հիմա կուհիմա ձեր պատմութիւնը գրող չիկայ: Դուք պիտի գծեք օր մը Ձեր հոգեկան աշխարհի պատկերը: Միայն Ձեր ձեռքով գծած պատկերը կրնայ տալ Ձեր վշտին ու տժգոյն քնարերգութեան եւ ահաւոր սասանման տեսիլը» («Հայաստան», 1917 թ., թիվ 95): Խմբագիրը բնավ էլ զույմերը չի խտացնում, հուզմունք եւ ահասարսուռ հոգեվիճակ առաջացնելու համար չէ, որ կատարում է սույն շեշտադրումը. «Ձեր աշխարհի փիլիսոփայութիւնը մանկական չէ, որովհետեւ մանկութիւնը ձեր մէջ թռչում ըլլալէ, փետուր ունենալէ դադրած է: Ես կարողացած եմ Ձեր գրականութիւնը, Ձեր երգերն ու բանաստեղծութիւնը: Ես գիտեմ, որ դուք պիտի բարձրանաք եւ պիտի երգէք, թաթաւուն տրտմութեամբ, մոր քնարով եւ չնաշխարհիկ հազներգութեամբ... Այսօրուան պատմութիւնը մենք կը թողունք Ձեզի, որպէսզի դուք դարձնէք զայն մեծ ու մոլորական» (նույն տեղում): «Սղերդի բնաջնջումը» խորագրով ընդարձակ նյութը ներկայացնում է Սղերդի հայության բնաջնջման գործընթացը: Հեղինակը՝ ակամատես Արմենակ Փառայանը, հաղորդում է, որ սույն շրջանում գտնվեցին նաեւ բարեսիրտ քուրդ համերկրացիներ,

որոնք հարեանության պատիվը «յարգելով հայեր պահեցին իրենց տներ, բայց օսման երեսփոխանական ժողովի մախլիկն անդամ տներոցի Ապտիկ էֆենտի որ շնորհիւ հայերի մարդ եղած էր մինչեւ երեսփոխանի աստիճանի բարձրանալը, այս անգամ չի մոռանար իր վատութիւնը ցոյց տալ հայեր ու անոնց ըրած բարիքի փոխարէն չարիք հատուցանել» («Հայաստան», 1917 թ., թիվ 92): Հենց վերոնշյալ երեսփոխանն է իշխանություններին հայտնում, որ քրդերի տներում բազմաթիվ հայեր են թաքնվում եւ օգնական ուժեր ստանալով՝ կասկածելի թվացող քրդական բնակարաններում խուզարկություններ է կատարում եւ հայտնաբերված հայերին անմիջապես սպանել տալիս: Սղերդահայության ողբերգության պատկերը եզրափակվում է այսպես. «400 000—500 000 բնակչութիւն ունեցող Սղերդը իր գաւառակներով այսօր հայութիւնէն դատարկ է եղեր, միայ կիւն եւ երեխաների մի չնչին տոկոսն է մնացեր Միջագետքի անապատները (Եթե մինչեւ հիմա ողջ են)» (նույն տեղում):

Շարունակելի

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«Ակունքի» ակունքներում

Սկիզբը՝ թիվ 19–21

Ծննդյան «վկայականը»

Մարոն «Ակունք» ազգագրական համայնքի ծննդյան պաշտոնական օր էր համարում 1977 թվականի նոյեմբերի 6-ը՝ այն օրը, երբ արդեն ձեւավորված, բեմ բարձ-



րանալու իրավունք ունեցող խումբն առաջին համերգն ունեցավ պետական համալսարանում: Մարոյի համար շատ կարեւոր էր մայր բուհի՝ իր երբեմնի դասախոսներից եւ գործընկերներից դրական կարծիքներ եւ դրվատանքի խոսքեր լսելը, ինչը տեղի ունեցավ այդ օրը: «Մարո ջան, շատ ճիշտ ճանապարհի վրա ես, դա է մեր ազգային երգը»,— ոգեւորում էին նրանցից շատերը:

Սակայն Լեզվի ինստիտուտի աշխատակիցները, նրանց միացած տարբեր մասնագիտությունների տեր մտավորականները,

որոնք խմբի նախնական կազմում սատարել էւ ոգեւորել էին Մարոյին, խմբի ծննդյան օրը տեղափոխում էին 1974 թվականի աշուն՝ այն օրը, երբ ինստիտուտի աշխատակիցներ Մելադա եւ Ժաննա Աղաբեկյանները գործընկերներին հրավիրել էին իրենց տուն՝ Գորիսի «Ճխթթո» ուտելու, որտեղ էլ ծագել էր ազգագրական երգերի խումբ ստեղծելու գաղափարը:

Մարոն մի առասպելախառն երազ էլ էր պատմում, որ կրկին «Ակունքի» ստեղծման հետ էր կապվում. խմբի առաջին պարապմունքներից մեկ-երկու ամիս առաջ Մարոն մի մարգարեական երազ էր տեսել իրենց տանը մի հրեշտակաձայն երգչախումբ էր երգել, որի խմբավարն էր եղել... Փավստոս Բուզանդը...

— Այ, եթե որոշակիորեն հիշեիք, թե երբ եք տեսել այդ երազը, հաստատ այդ օրն էլ կհամարեիք «Ակունքի» ծննդյան օր,— կատակում էի ես: Մարոն ժպտում էր:

Մենք երբեք չէինք մտածում խումբն անվանակոչելու մասին, մի տեսակ հարմարվել էինք՝ ուղղակի ազգագրական երգերի համույթ, հետագայում՝ ազգագրական երգի-պարի համույթ: Սակայն երբ խմբի հովանավորությունն իր վրա վերցրեց Հայաստանի հեռուստառադիոպետությունը, խումբն անվանակոչելու պահանջ դրվեց: Հայրիկի առաջարկով 1981 թվականի մարտին անվանակոչվեցինք «Առնոս»՝ Հայրիկի ծննդավայրի՝ Շատախի Ջնուկ գյուղի տարածքում գտնվող հայտնի լեռան անունով, սակայն ընդամենը մեկ ամիս անց երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր, ճանաչված մտավորական Արմեն Հովհաննիսյանի առաջարկով խումբը վերանվանակոչվեց «Ակունք»:

— Սա ավելի ընդհանրական, համահայկական անուն է, Մարո ջան,— բացատրեց եւ հիմնավորեց նա:— Եվ հետո՝ բոլոր լեզու-

ներում կթարգմանվի եւ հասկանալի կլինի, որ դուք մեր երգի ակունքներն եք մաքուր պահում: Կտեսնեք, թե ինչպիսի բարեբախտության հմայիլ կդառնա այս անունը: Ես կանխագուշակեմ, որ առաջիկա հինգ տարիները խմբի համար վերելքի ու շունչալից հաջողությունների տարիներ կլինեն: Իսկ վեցերորդ տարում, ինչպես սովորաբար լինում է երաժշտության աշխարհում, կսկսվեն քննադատությունները, օրինակ՝ մի՞թե սրանք հայկական երգեր են, ավելի շուտ քրդական են, գուցե ասորական եւ այլն...

Արմեն Հովհաննիսյանի կանխատեսումը որքան ուրախացրեց, այնքան էլ տխրեցրեց, բայց վերջին հաշվով կատակ էր, որ նաեւ զվարճացրեց բոլորիս:

Գեւորգը

«Ակունքի» ծաղկմանը զուգընթաց ճանաչվում էինք նաեւ խմբի մասնակիցներս: Չէր լինում որեւէ միջոցառում, որին ներկա ակունքիցիներիս չխնդրեին որեւէ երգ երգել մեր ծրագրի փրված երգերից: Այդպես էր հաճախ լինում նաեւ ինձ հետ:

Մի անգամ, երբ ընտանիքով մասնակցում էինք մեր հարազատներից մեկի երեխաների մկրտության արարողությանը, խնջույքի ժամանակ ինձ ու քրոջս խնդրեցին երգել (քույրս էլ էր մի որոշ ժամանակ գալիս խմբի փորձերին): Շիրակի խաղիկների մի փունջ երգելու ընթացքում զգացի, որ նվագողներից մեկը շվիի շատ քաղցր եւ մաքուր ձայնով նվագակցում է մեզ: Երբ երգն ավարտվեց, շրջվեցի եւ տեսա նվագողին՝ ակորդեոն նվագողի կրտսեր եղբայրն էր՝ 15-ամյա մի պատանի, որ եղբոր երաժշտախմբի հետ ելել էր նրան օգնելու միջոցառման ընթացքում:

Պարզվեց, որ Գեւորգ անունով պատանի սրնգահարը Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի ուսանող է, սովորում է շվիի եւ դուդուկի դասարանում: Իսկույն գրանցեցի նրա հեռախոսահա-

մարը եւ խմբի հաջորդ փորձին ամեն ինչ պատմեցի Մարոյին:

— Շուտով մենք ռադիոյի եւ հեռուստատեսության խումբ ենք դառնալու,— միանգամից պայծառացավ Մարոն,— այդ ժամանակ էլ կգանգահարես, թող գա քո հավանած սրնգահարը:

Ընդամենը մի քանի ամիս անց «Ակունքին» պետական խմբի կարգավիճակ շնորհվեց, զանգահարեցի Գեւորգին, եկավ: Մարոն շատ հավանեց նրա երաժշտական տվյալները, դեռեւս պատանեկան տարիքում ժողովրդական փողային գործիքներին արդեն իսկ վարպետ տիրապետելը եւ միանգամից ընդունեց նվագողների խումբ:

Անցան տարիներ, Գեւորգն իր ուշիմությամբ եւ նվիրվածությամբ՝ «Ակունքի» ջերմ մթնոլորտում, Մարոյի հոգատար ձեռքի տակ այնքան կատարելագործեց իր ազգային երաժշտական ճաշակն ու վարպետությունը, որ մենք էլ չհասցրինք հասկանալ, թե երբ դարձավ արդեն ճանաչված եւ սիրված դուդուկահար, իսկ հետագայում՝ Լեւոն Մադոյանին, Վաչե Հովսեփյանին, Զիվան Գասպարյանին արժանավոր փոխարինող՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Գեւորգ Դաբալյան:

Ապրիլի 24-ին

80-ականների սկզբին ապրիլի 24-ը դեռեւս աշխատանքային օր էր: Խմբի բոլոր մասնակիցներս, սակայն, ներառյալ նաեւ Մարոն եւ Հայրիկը, միաձայն որոշեցինք փորձի փոխարեն Ծիծեռնակաբերդ գնալ: Ռադիոտանը մերձակա կանգառում տրանսպորտի սպասելիս մեզ միացան գլխավոր խմբագիր Արմեն Հովհաննիսյանը եւ ռեժիսոր Ալեքսանդր Քաջվորյանը: Որոշեցինք թիվ 58 ավտոբուսով հասնել մինչեւ Բաղրամյան փողոցի վերջը, ապա Կիեյանով ոտքով իջնել դեպի հուշարձան, սակայն ավտոբուսն Օրբելի եղբայրների փողոցով անսպասելիորեն թեքվեց ձախ: ➔ էջ 8

Վաթսուռնականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 3, 4

Կյանքի սերը եւ բանտային հարմարավորականությունն ու ակամա գիտնական դառնալը կապ չունեն իրար հետ: Երկու հասակների օտարացումը դեռեւս հարցի վերջնական լուծում չէ: Նրանց երկխոսությունը շարունակվում է՝ այս անգամ բարոյական լիակատար հաղթանակ բերելով ծեր Ստրաուդին. «Դու հաղթել ես ինձ, Ստրաուդ,— եռանդով սկսեց ապացուցել պատանին:— Ես ընդունում եմ, որ հաղթել ես: Գիտես որն է մեր տարբերությունը: Ես ազատ էի: Իսկ դու նվաճել ես ազատությունը»: Ու թեւ երիտասարդ Ստրաուդը ծեր Ստրաուդին հորինում-պատմում է կիսատ մնացած կենսագրության շարունակությունը, որը, չեղյալ լինելով հանդերձ, ճակատագրի բերումով կարող էր նաեւ իրական լինել, այնուամենայնիվ, երկու հասակների մեջ հաղթանակում է տառապանքով նվաճված եւ ոչ թե որպես պարգև ստացած կյանքը: Հաղթանակը վիճակված է նրան, ում, Հենրիկոյի խոսքերով ասած, հնարավոր է անգամ սպանել, բայց անհնարին է հաղթել: Իմիջիայլոց, կերպարային բնավորության որոշ ընդհանրություն կա Հենրիկոյի ծերունու՝ խաբուսիկ, արտաքին պարտության տպավորություն թողնող դժվարին հաղթանակի եւ Ստրաուդի պարտություն-հաղթանակի միջեւ:

Իրական փաստի վիպայնացմամբ, Ստրաուդի կերպարի գեղարվեստական մարմնավորմամբ՝ Ջեյթունցյանն ստեղծում է ոգու անպարտության եւ բարոյական հաղթանակի մի հավաստի պատմություն, ինչը երեւան է հանում 20-րդ դարի բնավորության գծերից մեկը: Ինչհի հատկապես 20-րդ դարի, որովհետեւ, անկախ այն փաստից, որ դեպքը կատարվել է 20-րդ դարում, նախորդ



ժամանակների համեմատությամբ առավել չափով այդ դարն է ընդունակ ամեն տեսակի արտառոց տարօրինակությունների:

Ջեյթունցյանը նշված երկու վիպակներում, անդրադառնալով 20-րդ դարի երկու անսովոր դեպքերին, կարողացել է փաստը վերածել գեղարվեստական ստեղծագործության եւ իրական փաստի ու փաստի հեղինակային մեկնաբանության միասնությամբ ստեղծել պայմանական, բայց նաեւ իրական հերոսներ եւ հոգեբանական յուրատիպ լուծում տալ ներքին տրամաբանությունից բխող հարցերին:

Ինչպես նշվեց, Ջեյթունցյանի գեղարվես-

տական որոնումների մեջ առանձնահատուկ տեղ ունի պայմանականության գեղագիտությունը: Այդ սկզբունքով է գրված նաեւ «Կատակերգություն առանց մասնակիցների» վիպակը, որը, հարցադրման կարեւորությամբ հանդերձ, գեղարվեստական արժեք չի դարձել՝ հիմնականում պայմանական տարրերի ու պայմանական միջավայրի առավել վերացարկման պատճառով, դրա հետեւանքով խախտվել է ասելիքի թեկուզեւ պայմանական, բայցեւայնպես իրական հիմքը:

Պայմանական մտածողության շնորհիվ ստեղծվող գեղարվեստական իրականու-

թյան ուսումնասիրությունը, հետաքրքրական ու կարեւոր հարց լինելով (ինչի քննությունը դուրս է այս ուսումնասիրության շրջանակներից), կարեւորություն ունի նաեւ գրական հերոսի նկարագրի ու կերպարի ստեղծման տեսակետից:

Կենսական հիմքի պահպանումով պայմանական մտածողությունը նախադրյալներ է ստեղծում խորհրդանշանի վերածվող հերոսների ձեւավորման համար: Վերացարկման շնորհիվ ստեղծվում են գրական մոնտաժի հնարավորություններ: Այդ մոնտաժի հետեւանքով ստեղծվող հերոսն իր ներաշխարհով ու հոգեբանությամբ, հարաբերություններին ու գործունեության միջավայրով մտացածին լինելով հանդերձ, իր մեջ միավորում է այնպիսի հատկանիշներ, որոնք այլ կերպ անկարելի է ի մի բերել: Երեւակայության մեջ գրողն ստեղծում է իրականության եւ հերոսի ապրած վիճակների, գործողությունների մորմանակերտ: Ջեյթունցյանի որոնումներն այս ուղղությամբ պարտավորեցնող են, քանի որ գեղարվեստական մտածողության տվյալ սկզբունքը պահանջում է թե՛ գրողի ստեղծած աշխարհի ներքին լիարժեքություն, պայմանականության հավանականություն եւ համոզականություն եւ թե՛ գրական նախասիրության հետեւողական կիրառություն:

Ջեյթունցյանի որոնումն այս երկերում ավելին չէ, քան արդեն ծանոթ ու հայտնի փաստերի գեղարվեստական լուծումը: Գրողը չի երեւում իր նյութով, երեւում է ստեղծված նյութի իր անդրադարձներով:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

44-օրյա պատերազմի դասերն ու հետեւանքները

(Պատմությունը կրկնվում է)



1920 թվականի հայ-թուրքական պատերազմը՝ պատմական, քաղաքական եւ մի շարք այլ համգամանքների դաժան դասավորումով, ավարտվեց հայոց պարտությամբ եւ Հայաստանի Հանրապետության կորստով:

Շուրջ 100 տարի հայությունն այլեւ ռազմական եւ պատերազմական առումներով չէր բախվել թրքության հետ (1991—94 թթ. Արցախյան առաջին պատերազմն Ադրբեյջանի հորջորջվող պետության դեմ էր առա-

վելապես):

Եվ ահա 100 տարի անց՝ ճիշտ նույն ամսին՝ սեպտեմբերին, եւ գրեթե նույն օրը, թուրքական համախումբ ուժերը վերստին հարձակվեցին հայոց բանակի եւ հայոց երկրի վրա: Եվ ինչպես մեկ հարյուրամյակ առաջ, թուրքական հարձակումը նախապես մանրակրկիտ, խնամքով եւ խիստ գաղտնիության պայմաններում մշակված ու պլանավորված

գործողություն էր: Ինչպես 1920 թվականին, այնպես էլ 2020-ի սեպտեմբերյան նույն օրը Թուրքիան հանկարծակի եւ լայնամասշտաբ հարձակում իրագործեց հայկական տարածքների վրա՝ Հայաստանի դեմ:

Թուրքերը լոջորեն հաշվարկել էին ամեն ինչ, բոլոր գործոնները՝ մանրուքներից մինչեւ խոշորամասշտաբ, եւ իրենց պլան-հաշվարկներում էական սխալներ, բացթողումներ թույլ չէին տվել: Թերեւս միայն չէին հաշվարկել հայ զինվորի բացառիկ քաջու-

թյունն ու անձնագոհությունը, որն զգալիորեն խառնեց նրանց պլաններն ու խաղաքարերը:

Պատերազմի առաջին իսկ ժամերից հայ զինվորն ու զորականն անմախաղեպ արիությամբ եւ համարձակությամբ դիմադրեց ու դիմակայեց մեր արյան տենչավառ զազանին:

Ամերեակայելի համառ ու դաժան մարտեր էին ընթանում առաջին իսկ ժամերից սկսած՝ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Թվում էր, թե հայ զինվորն իր արիությամբ եւ համարձակությամբ բեկելու է պատերազմի ընթացքն ու ելքը, բայց, ավաղ, այդպես չեղավ: Թշնամին շատ ավելի հիմնավոր էր նախապատրաստվել այս պատերազմին եւ ուներ տեխնիկայի եւ մարդկային ռեսուրսների քանակական ու որակական առավելություն: Նրա կողմից կռվում էին միջազգային վարձու ահաբեկիչներ: Թուրքական զինուժն ամեն ինչով նպաստեց արդեւջանական ագրեսիայի հաջողությանն ու, ի վերջո, հաղթանակին: Հայաստանը դիվանագիտական ու ռազմաքաղաքական ճակատում միայնակ մնաց Ադրբեյջանի, Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական ուժերի դեմ հանդիման:

100 տարի անց պատմությունը նույն ողբերգական ելքով ու ծանր հուսահատությամբ մեզ համար կրկնվեց. թուրք թշնամին ծանր հարված հասցրեց մեզ: Այդ պարտության դասերն ու հետեւանքները դեռեւս պետք է խորությամբ ուսումնասիրել, անհրաժեշտ եզրահանգումներ կատարել:

Բայց այսօր արդեն պետք է արձանագրենք, որ մենք երբեք էլ իրավունք չունենք հանգստանալու, հետ մնալու: Մենք միշտ պետք է պատրաստ լինենք նոր պատերազմներին ու նոր մարտահրավերներին դիմակայելու: Թշնամին երբեք չի հանգստանում ու չի հանդարտվում: Նա միշտ սողորված է հակահայկական հիստերիայով ու ատելությամբ: Նա Հայկական լեռնաշխարհը, հայոց պատմական բնօրրանը միշտ համարել է իրենը եւ ձգտում է նաեւ իրենով անել այդ հողի ու հայրենիքի վերջին հատվածը նույնպես:

Ուրեմն՝ կենաց ու մահու գոտեմարտը դեռ առջեւում է: Պետք է հիմնավորապես պատրաստվել այդ օրվան:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՄԱՐԿ ԿՈՐԼԵՐ

← էջ 5

Անգամ կայսրության քաղաքացի լինելով՝ հրեան կարող էր բանակում չծառայել:

Բայց մանավանդ, ինչպիսին էլ լինեի իր կարգավիճակը, նա դա չէր կարողանալու անել հանգիստ խղճով: Բանակն ուներ իր պաշտամունքը, իր ծեսերը: Պաշտում էին կայսրին՝ Օգոստոս կայսերը, կայսրության մեծ խաղաղարարին ու միավորողին, որն արեւելյան գավառներում, որոնք վիրավորանքների ու բռնարարքների զոհեր էին, ընդունվում էր որպես փրկիչ: Նրա անձի շուրջ պաշտամունք էր ստեղծվել: Հանձարեղ կռահողականությամբ Օգոստոսը թույլատրել, հետո խրախուսել էր դա: Իր հաջորդները ոչ մի հիմք չունեին այն չչարունակելու իրենց օգտին: Արդ, երբեք որեւէ հրեա, ով հարգում էր ինքն իրեն, չէր կարող ընդունել մեկ այլ աստծու՝ Բարձրյալի աչքի առաջ...

Օգոստոսն զգում ու հաշվի է առնում դա: Նա չի հրաժարվում հարգանքից, որն իրեն մատուցվում է. նա թողնում է, որ այն արտահայտվի միակ Աստծու հանդեպ հավատքի հետ համատեղելի ձևերով:

Այսպիսով՝ հրեան ազատված էր Կեսարին «Աստված» անվանելուց: Կայսերը տրվող հավատարմության պարտադիր երդումից հանված էր որեւէ ձեւակերպում, որը կարողանար վիրավորել հրեային: Հեթանոսական զոհարաններում կայսեր պատվին մատուցված զոհաբերությունները փոխարինվում են նրան ուղղված աղոթքներով, որոնք ասվում են ժողովարաններում: Կայսեր պատկերները փոխարինվում են անմեղ խորհրդանիշներով (վահան, թագ) կամ էլ քարակոթողներով ու արձանագրություններով:

Այս ամենը քաղաքացիական կյանքում, իսկ բանակում, որն ամենքից շատ էր ներգրավված Աստված-կայսերը ծառայելու մեջ: Ամեն պահ այդ արտոնությունները կարող էին խախտվել: Ամեն քայլի խայտառակության առիթ էր առաջանալու հավատացյալ հրեայի համար... Անշուշտ հռոմեացիները Պաղեստինում ցույց տվեցին հիանալի զսպանություն: Ձորագնդերը մտան երուսաղեմ՝ առանց կայսեր պատկերի: Վիտելիոսը՝ Սիրայի պատվիրակը, որը պիտի անցներ Անտիոքից Պետրա, իր լեզվի հակամեծի հետ շրջանցում է Հուդայի տարածքը, որպեսզի կայսերական խորհրդանշանը չվիրավորի բնակչության զգացմունքները: Մնում են բազմաթիվ դրո-



շակները կենդանիների (արծիվ, խոյ, ցուլ) պատկերներով... Դրանք բոլորն էլ եղկելի բաներ էին հրեայի համար, որը ծառայելու էր այդպիսի դրոշի ներքո:

Բայց հրեական կրոնը պահանջում էր նաեւ կյանքի շատ խիստ կարգապահություն: Այդ կրոնի օրենքները կարգավորում էին սննդի ընդունումը, նախատեսում մաքրագործումներ, ամեն մի գործունեությունից շաբաթական դադար: Ուրեմն ինչպե՞ս հետեւել այդ օրենքներին, երբ ներգրավված ես հեթանոսական բանակի մեծ մեքենայի մեջ:

Այդ փաստարկը բացառում է նաեւ հռոմեական բանակում որեւէ հեթանոսի ներկայությունը, որը դավանափոխվել էր հրեական կրոնի: Այդ մարդիկ կրում էին նորադարձներ անունը (որոնք եկել էին դրսից ու վճռորոշ քայլ կատարել): Դրա համար պետք էր խնդրել թլփատում եւ մկրտության մաքրագործող ջրասուզում կատարել տաճարում: Դրանից հետո մարդը դառնում էր «հրեա բոլոր տեսակետներից»: Նա, հետեւաբար, ինչպես դա նկատել է տալիս Պոդոսը հրեամետ գաղատացիներին, «պարտավոր է բոլոր օրենքները կատարել» (Գաղ. ե 3): Այն, ինչ անում է հրեան, անելու է նաեւ նորադարձը: Հրեաներին վերաբերող արգելքները լինելու են իրենց: Եթե հռոմեական բանակում հրեաներ չլինեին, նորադարձներ եւ չէին լինի...

Բայց միթե Նոր Կտակարանն ինքը չի վիճարկում այդ հայացքը: Նա մեզ սիրով պատմում է երկու հարյուրապետների մասին՝ նրանց կերպարը ներկայացնելով մանրամասն. մեկը մատուցում էր Կափառնայում, որի ծառայապետին Հիսուսը բժշկեց: Մյուսը՝ Կոռնելիոսը, մատուցում էր Կեսարիայում, որն իր մարդկանցից երեքին ուղարկել էր Պետրոսին փնտրելու, որպեսզի նրանից լսի Ավետարանը: Արդ, այս երկու սպաների վարմունքն ապշեցնող է հենց նրանով, որ դրանք ընդհանուր են: Ըստ Ղուկաս 7-ի՝ Կափառնայումի ծերերը հանձն են առնում բարեխոսելու Հիսուսի մոտ՝ իրենց բարեգործի, ժողովրդի բարեկամի, դրամագլուխ տվողի համար, որը թույլ տվեց կառուցել ժողովարանը: Գործը 10-ում Կոռնելիոսն անվանվում է «աստվածավախ» մարդ, որն առատ էր իր ողորմությունների մեջ ու ջերմեռանդ՝ աղոթքներում: Երկու հատվածներն ընդգծում են այդ մարդկանց հեթանոսական ծագումը. Հիսուս բացակայում է. «Անգամ Իսրայելում ես այսպիսի մեծ հավատք չգտա»: Ու Պետրոսը, երուսաղեմ վերադառնալով, պետք է պաշտպանվի մի անմաքուր մարդու հետ բարեկամական կապեր ունենալու մեղադրանքից:

Այդ հարյուրապետները, ուրեմն, ուխտի ժողովրդից չեն: Նրանք քայլ չեն արել խնդրելով, որ իրենց ընդգրկեն սուրբ ազգի մեջ: Նրանք մնում են շեմին կանգնած. դե-

ռեւս հեթանոսներ լինելով՝ նրանց, սակայն, գրավում է անտեսանելի Աստծու պաշտամունքը ու այն մարդկանց բարոյական մաքրությունը, որոնք կատարում են այդ պաշտամունքը: «Աստվածավախ» արտահայտությունը, ի դեպ, պատահականորեն չի ընտրված: Խոսքը մի տեխնիկական եզրույթի մասին է, որը հաճախակի է հանդիպում այդ ժամանակաշրջանի հրեական հատվածներում, այդ թվում՝ «Գործք»-ի մեջ՝ նշանակելու համար հեթանոսների այն հատվածին, որին կրոնական գործուն քարոզչությանը կարողացել էր դարձնել ժողովարանի զարգացման համակիրներ:

Կափառնայումում հարյուրապետը կարող էր լինել հրեական արքայական բանակի սպա, քանզի քաղաքը տեղակայված էր Հերոդիոս Անտիպասի տարածքում: Խոսելով «թագավորական սպայի» մասին (Հովհ. 7 46)՝ չորրորդ Ավետարանը գուցե պահպանել է շատ ճշգրիտ պատմական մի հիշողություն: Բայց հաշվի առնելով ոչ այնքան ապահով տարածքներում գործամասեր տեղակայելու հռոմեական սովորույթը՝ հնարավոր է նաեւ, որ այդ հարյուրապետը ծառայած լինեի սահմանի վրա ամրակայված մի հռոմեական պահակապետում: Այդ դեպքում դա կխոսեր այն բանի օգտին, որ Հռոմի կողմից ղեկավարվող բանակի մեջ կային «աստվածավախներ»: Գործք 10-ը տալիս է դրա ապացույցը. Կոռնելիոսն իտալական կոհորտայից էր, որը «հռոմեական քաղաքացիների» կամավոր միավորում էր՝ լծված մի ավելի թեթեւ ծառայության: Քանի որ մի հունա-լատինական հատվածում «իտալական կոհորտա» եւ «իտալացիներ» բառերն իրար հերաթագայում են, պետք է ուրեմն մտածել, որ դրանք այն մարդիկ էին, որոնք եկել էին մայր երկրից: Գուցե այնտեղ պետք է տեսնել նաեւ պրոկուրատորի անձնական պահակախմբին, որի համար այդ զորագունդը «արտերկրում հայրենիքի մի մասնիկ էր»:

Այդ երկու՝ Կափառնայումի ու Կեսարիայի հարյուրապետներից բացի՝ կա երուսաղեմի հարյուրապետը, որին հանձնարարված էր իսկել Գողգոթայի մահապատժի կատարումը: Եթե նա հրեա չէր, որը մենք ապացուցեցինք, ուրեմն պետք է նրա մեջ տեսնել համակիր հեթանոսի: Ոմանք այդպես էլ կարծում են: «Գուցե նա աղոտ կերպով էր նորադարձ»,— ասում է հայր Լազարաթը Ղուկասի մասին իր մեկնաբանության մեջ: ➔ էջ 8

ՄԱՐԿ ԿՈՐԼԵՐ

← էջ 5, 7

Բառն անորոշ է, քանզի կան ամբողջովին ես նորադարձ, կան ոչ: Արդյո՞ք նա նրանցից էր, «ովքեր աստվածավախ» էին:

Մենք մնում ենք ենթադրությունների ոլորտում: Բայց եւ այնպէս՝ պետք է փորձել: Մեր հարյուրականը կարող էր լինել երուսաղեմի գործադան, Կեսարիայում տեղակայված զորագնդերից կամ էլ նույն քաղաքի պրոկուրատորի սպայակույտից:

Երուսաղեմում հռոմեացիները պահում էին մի օժանդակ կոհորտա՝ բաղկացած թվով հազար զավառաբնակներից, որոնք սիրիական ծագում ունեին: Այդ հեթանոսների եւ բնակչության միջեւ տարածայնությունները մնացել են հիշողության մեջ: Կեսարիայում տեղակայված էր հինգ հետեակային ու մեկ հեծելազորային կոհորտա: Ոչինչ չի խանգարում մտածելու, որ խտական կոհորտան, որի մասին «Գործք»-ում խոսվում է մեկ տասնամյակ ավելի ուշ, այնտեղ արդեն չի ունեցել իր գործառնությունը: Այդ ժամանակաշրջանի հատվածները խոսում են նաեւ մի կոհոր-

տայի մասին, որը բաղկացած էր Սեբաստիայի բնակիչներից, որոնց մեջ պետք է տեսնել սամարացիների՝ Յերուվդես Մեծի հին գորագնդերին: Վերջապես Կեսարիայում պրոկուրատորն ուներ իր սպայակույտը: Քանի որ Յոնան ուղղակիորեն միացրած գավառները (ինչպես Յուդան էր 6 թվականից ի վեր) լեզվոններ չունեին, «լեզվոնական հարյուրապետները հավաքագրվել են հարեւան գավառներից՝ զորքերի հրամանատարի սպայակույտում ծառայելու համար»: Եթե խաչի տակ կանգնած հարյուրապետը Պիղատոսի սպայակույտից էր, ուրեմն նա, հավանաբար, եղել է այն չորս լեզվոններից, որոնք տեղակայ-



ված էին մոտակա Սիրիայում:

Երուսաղեմում երկար ապրելով՝ նա հավանաբար կարողացել էր նկատել հրեական կրոնի որոշ գրավիչ կողմերը: Բայց նման կարեւորության ծառայության մեջ

արդոք պիտի հանդուրժէին բնակչության հետ այդքան սերտ կապերը: Ինչ վերաբերում է Պիղատոսին, ապա երբ նա գալիս է Կեսարիայից, նրան շրջապատում է վստահելի մի պահակախումբ՝ հռոմեացիներ հրամանատարներով: Պիտի ասել, որ Պիղատոսի կինը եւս համակրանք էր տածում հրեական աշխարհի հանդեպ. ամուսնուն ուղարկած ուղերձը մատնում է նրա հոգեկան խռովքը: Դավադրությունը Յիսուսի դեմ նրան տառապանք է պատճառում: Խոսքը Յիսուսի մասին է, նրա ուղերձի, նրա անմեղության եւ ոչ թե ժողովարանի ու նրա ռաբինների մասին: Ոչինչ չկա, որ հավաստի, թե Պիղատոսի կինը «աստվածավախ էր»: Պիղատոսը սպայակույտի իր լավագույն հարյուրապետին հրամայում է հսկել իր անվտանգությունը եւ երուսաղեմում նրան է վստահում Յիսուսին խաչելու նրբաբնույթ առաքելությունը:

Շարունակելի

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՆՈՅԱՆԻ

«Ակունքի» ակունքներում

← էջ 6

Ուղեւորներից շատերը, որոնք չէին տեսել Յայրիկին եւ Մարոյին, զայրացած բացականչեցին. «Ես ռւր է քշում», «Ես ռւր է տանում եւ խելագարը» եւ այլն: Բայց մինչեւ պարզեին, թե կազմակերպիչների հորդորով ուր է տանում «խելագարը», մենք արդեն Կիւսյան կամրջի մոտ էինք, իսկ զայրացած ուղեւորները լռել էին՝ հասկանալով, որ «կարեւոր խումբ է գնում» եղեռնի զոհերի հուշարձան:

Ծիծեռնակաբերդի մուտքի մոտ էինք, երբ անձրեւ սկսվեց, որ մեր բարձրանալուն եւ երգած ազգային-հայրենասիրական եր-

հոծ թափորի վրա, նկատվում էին արտասովոր բազմաթիվ դեմքեր:

Յայրիկի երգից անմիջապես հետո, ինչպես ծրագրել էին մեր կազմակերպիչները, Արեգնազը զրնգում ձայնով երգեց «Սասնա Գործնին»՝ արիավիրքների դիմագրավման ծիսական այդ հիմնավորը երգը, բոլորս ձայնակցելով դուրս եկանք հուշարձանից. մեր հետեւից շարժվեց քար կտրած բազմությունը:

Փոքր-ինչ մեղմացած անձրեւը միանգամից կրկին հորդացավ: Կարծես ինչ-որ խորհրդավոր ծիսակատարություն-միստերիայի մեջ էինք հայտնվել...

հանգիստ մտնում իմ տեղն այնպես, կարծես ոչինչ էլ չի եղել...

— Երազում համբուրվելը լավ բան չէ, հեռանալ է մշամակում,— երազս մեկնում էր մայրս:

— Դե, էլ ի՞նչ հեռանալ, վաղուց հեռացել եմ արդեն,— փորձում էի երազներին մշամակություն չտալ ես:

Եվ մի օր էլ, երբ արդեն Լեզվի ինստիտուտում հայցորդ էի ձեւակերպված եւ թեկնածուական միմիւրներին համար էի պարապում, իմ ղեկավար եւ իմ ակունքական Անի Ջանեյանից իմացա Մարոյի անսպասելի լուրջ հիվանդության մասին...

Անցան ամիսներ, մի տեսակ հույս էի փայփայում, որ կբուժվի, իրեն լավ կզգա, եւ անպայման այցելության կգնամ, բայց, ավաղ, ոչ մի լավ լուր: Ընդհակառակը՝ ասում էին, որ ավելի է վատանում նրա վիճակը:

1987-ի նոյեմբերի սկիզբն էր: «Ակունք» մեկ ամսով համերգային շրջագայության էր մեկնել Սիւցյալ Նահանգներ եւ Կանադա: Ընդմիջումից հիմնարկ մտնելիս գործընկերներիցս մեկն ասաց, որ ընդմիջմանը զանգահարել էր Յայրիկ Մուրադյանը եւ խնդրել իրեն զանգել: Անմիջապես աշխատասենյակ հասա եւ զանգահարեցի: Յայրիկը շատ ընկճված ձայնով ասաց.

— Բալիկ ջան, Մարոն ուզում է քեզ տեսնել:

Հազիվ զսպելով հուզմունքս՝ ասացի.

— Անպայման կգամ, Յայրիկ ջան: Վաղը դր ժամին է հարմար:

Յայրիկն ասաց, որ կեսօրին կարող եմ գնալ: Մի կերպ ինձ տիրապետեցի մինչեւ լսափողը դնելը, իսկ հաջորդ օրը մրգեր վերցրած գնացի Կապույտ մզկիթի հարեւանությամբ այն շենքը, որտեղ Յայրիկի եւ Մարոյի հյուրընկալ տունն էր՝ հայ տոհմիկ երգի մեր տաճար-սրբավայրը...

...Միշտ կոկիկ, միշտ ժպտադեմ Անիկ մորաքույրը դուռը բացեց տխուր-տխուր հայացքով, բայց մի տեսակ նաեւ ուրախացած իմ այցելությունից: Նրան եւ Յայրիկին ողջունելուց հետո հայացքով Մարոյին փնտրեցի: Անիկ մորաքույրը սենյակի դուռը ցույց տվեց: Ներս մտնելով՝ ինձ թվաց սխալ տեղ եմ գնացել, քանի որ բազմոցին մտած էր ոչ թե հիսունը մի քանի տարի առաջ բռնկած Մարոն, այլ փոքրամարմին ու վտիտ մի շատ տղայից... տատիկ... Ես բարեկեցի, համբուրեցի ձեռքը: Մարոն սկսեց հեկեկալ եւ ինձ մեկնեց փոքրիկ մի թղթիկ, որ մինչեւ հիմա պահում եմ իմ արխիվի ամենաթանկ անկյուններից մեկում. «Սիրելի՛ Արտակ, Քեզ Աղօթարանի Սուրբ Բարեւ. Մեր մեջ՝ Իմ ու Քո, նույն անարատ հոգեւոր կապն է: Այնպես որ՝ Քո Մարիամ»: Ես հասկացա ամենացավալի՝ Մարոն այլեւ չէր խոսում,

երաժշտական ամենամուրբ լսողությամբ իր սաներին այնքան երգեր ու նրբերանգներ փոխանցող Մարոն այլեւ չէր կարողանում բանավոր հաղորդակցվել...

Սակայն նրա միտքը, ինչպես նախկինում, լուսավոր ու պայծառ էր: Ինձ մեկնեց «Ակունքի» մասին գիրք գրելու իր կազմած ծրագիրը եւ հասկացրեց, որ ես եւ Յայրիկը պետք է գրենք:

— Ո՛չ, երեքով, Մարո՛ ջան,— փորձեցի հուսադրել,— կառողջանա, անպայման միասին կգրենք:

Մարոն, սակայն, կրկին ցույց տվեց ինձ ու Յայրիկին:

Անիկ մորաքույրը սուրճ բերեց, ինչպես տարիներ առաջ: Հուզմունքս գնալով խեղդում էր ինձ: Փորձեցի սուրճի հետ արցունքներս կռվ տալ...

Մի քանի օր անց զանգահարեցի եւ կրկին հանդիպեցի: Անիկ մորաքույրը ասաց՝ Նախիջևանի մեղր եմ բերելու Մարոյի համար, բայց նա արտասովեց եւ հարմար չհամարեց այլեւ Մարոյին տեսնելը:

Մի քանի շաբաթ անց Մարոն այլեւ չկար: Նա վախճանվեց, զարմանալիորեն, մորս ծննդյան օրը՝ դեկտեմբերի 10-ին...

Երբ քառասուն օր անց հիմ եւ մոր ակուրցիներս հարազատների հետ այցելեցինք Մարոյի շիրմին, տարվա այդ եղանակին նրա թարմ հողաթմբին մի ճերմակ-ճերմակ միայնակ ծննդիկ տեսա: Ինձ թվում էր՝ Մարոն էր ողջունում եւ ժպտում այդ մաքրամաքուր ժպտով...

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

գերին զուգընթաց ավելի ու ավելի էր ուժեղանում:

Հուշարձանի մոտ Արմեն Հովհաննիսյանը, բոլորիս մի կողմ տանելով, ասաց.

— Ներսում բոլորդ կշարվեք պատի երկայնքով՝ Յայրիկը՝ մեջտեղում,— ասաց ու արագ իջավ հուշարձանի ներքեւում գտնվող ռադիոհանգույցը:

Տառացիորեն մի քանի վայրկյան հետո երաժշտությունը մարեց, ապա հնչեց Յայրիկի առինքնող ձայնը՝ այդ օրը մի առանձին հերոսականությամբ հնչող երգով.

Իմ հայրենյաց հողի՛ վարդան,
Հոգիս հոգվույդ եղնի՛ դուրբան,
Որ Տղմուտի ափերին՝ քով
Վաթսուն հազար կտրիճներով...

Հուշարձան մտնող եւ դուրս եկող ժողովուրդը կարծես քարացած մայում էր եւ լսում: Մենք ձայնակցում էինք կրկներգերը՝ հուզմունքից փշաքաղված: Հուշարձանի լուսարձակների լույսերն ուղիղ ընկնում էին

Վերջին հանդիպումը

Տարիների ընթացքում խումբը կատարելագործվում ու առավել ճանաչում էր ձեռք բերում, իսկ հիմնադիր կազմի հնագույն անդամներս կամաց-կամաց մեր տեղը զիջում էինք երաժշտական կրթությամբ մոր մասնակիցներին: Այդպես եղավ նաեւ ինձ հետ. գարնանային մի օր, ինչպես անդամագրվել էի խմբին, այնպես էլ որոշեցի հեռանալ, ավելի խորանալ գիտության մեջ, ստեղծագործել եւ այլն: Սակայն, ինչպես ասում եմ, ինչ մեղքս թաքցնեմ, մի փոքր մեղացած եւ ցավ զգալով դուրս եկա հինգ տարվա ընթացքում ինձ շատ-շատ հարազատ ու սիրելի դարձած «Ակունքից»:

Մարոյի համեմարարությամբ երբեմն զանգահարում էին խմբի հնաբնակները, ասում, որ կրկին գնամ փորձերին, բայց այդպես էլ չէի կարողանում ինձ տրամադրել... Երբեմն, սակայն, գնում էի... միայն երազում. հաճախ տեսնում էի, որ փորձի եմ գնում, ողջագուրվում եմ Մարոյի հետ եւ

